№ 272 ՈՒՐԲԱԹ, 7 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ

1912
ՔԱՌԱՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՈՒՐԲԱԹ 7 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ № 272

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ"
Сергіевская ул., № 5.
Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տելեֆօն № 2—53.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզվով
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.
Տպարանի տելեֆօն № 67.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ԱՌԱՋԻԿԱՅ 1913 Թ. ՀԱՄԱՐ

ՔԱՌԱՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 րուբլի է, 11 ամսվանը նոյնպէս 10 ր., 10 ամսվանը՝ 9 ր., 9 ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., 7 և 6 ամսվանը՝ 6 ր., 5 ամսվանը՝ 5 ր., 4 ամսվանը 4 ր., 3 ամսվանը՝ 3 ր., 2 ամսվանը 2 ր.: Դեկտեմբերի 1-ից մինչև յունվարի 1-ը 85 կոպ.:

Ամերիկայի բաժանորդները պէտք վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 32 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 րուբլի. Թիւրքիայի բաժանորդները՝ 120 ղրուշ:

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամականիշ:

Հին բաժանորդներից խնդրվում է կպցնել փոխադրական բլանկի վրա նախկին տպագրված հասցէն իր վրա ունեցած համարով:

ՊՐԷՄԻԱՆԵՐ

«Մշակի» տարեկան այն բաժանորդները, որոնք 1913 թ. համար (սկսած յունվարի 1-ից) միանուագ կամ մաս-մաս վճարած կունենան 10 րուբլի բաժանորդավճարը, կը ստանան ՁՐԻԱԲԱՐ հետևեալ 2 գրքերը.

1) „Մշակ" եւ հայ կեանք", որի մէջ ամփոփված են 1872 թւականից մինչև 1891 թ. «Մշակի» մէջ լոյս տեսած առաջնորդողները, յօդուածները և բանասիրականները, որոնք նուիրված են կանանց հարցին ընդհանրապէս և հայ կնոջ առաջխաղացման գործին մասնաւորապէս: Գիրքը բաղկացած է 7+294 մեծադիր էջից, տպված լաւ թղթի վրա, Գր. Արծրունու մեծադիր գրաւիւր պատկերով եւ մօզայիկ-նկար շապկով—հայ կնոջ էմբլեմային պատկերով:

2) „Մշակի" քառասնամեակ" Լ. Դանիէլեանի կազմած, 1872—1912 թ.թ., 132 էջ, տպված լաւ թղթի վրա: Գրքի մէջ ամփոփված են՝ Գր. Արծրունու, Անդր. Արծրունու, Րաֆֆիի, Գ. Սունդուկեանի, Ա. Արփիարեանի, Ե. Տէր-Մարկոսեանի, Ալ. Քալանթարի եւ Հ. Առաքելեանի պատկերները:

«Մշակի» ոչ-բաժանորդների համար առաջին գիրքն արժէ 1 րուբլի, իսկ երկրորդ գիրքը՝ 50 կոպ.: Ճանապարհածախքը՝ 15—20 կոպ. գրքի վրա:

Մեր հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ". Արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal „MSHAK".

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

„ՄՇԱԿԻ" ԳՐԱՍԵՆԵԱԿԻՑ

Ի նկատի ունենալով, որ ուշ բաժանորդագրվելու պատճառով ստեղծվում են մի շարք տեխնիքական անյարմարութիւններ, որոնք զրկում են խմբագրութեան գրասենեակը հնարաւորութիւնից յունվարի 1-ից կանոնաւորապէս թերթն ուղարկել բաժանորդներին, ուստի խնդրվում է բաժանորդ գրվել ցանկացողներին վաղօրօք դիմել՝ գրելով հասցէները պարզ և ճշգրիտ:

Իսահակ Յարութիւնեանը իր մօր, ամուսնու և քոյր-եղբայրների հետ խորին վշտով յայտնում է ազգականներին ու բարեկամներին իր սիրելի քոյր

ՕՐԻՈՐԴ ՍԻՐԱՆՈՅՇԻ

վաղաժամ մահը, որ տեղի ունեցաւ ամսիս 5-ին: Ամբիծքը այսօր, երեկոյեան ժամը 6-ին: Յուղարկաւորութիւնը վաղը, շաբաթ, ամսիս 8 ին, առաւօտեան ժամը 10-ին տնից (Մօնաստիրսկի պերէուլոկ № 10—Խլէբնայա հրապարակից) դէպի Մէյդանի ս. Գէորգ եկեղեցին: Թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը:

905. 1—1

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՈՒՊՐԱՎԱՆ

յայտարարում է մրցումն տեղական ուժերով կազմելու նախագիծ և նախահաշիւ ի Տէր հանգուցեալ Մեծ Իշխանուհի ՕԼԳԱ ՖԵՕԴՈՐՈՎՆԱՅԻ կիսարձանի՝ որ կանգնեցվելու է Գօլովինսկի պրօսպէկտի վրա, Կովկասեան Մուզէումի առաջիկայ շինութեան առաջ, ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ Փոխարքայի պալատի դիմաց, 2—2½ արշին բարձրութեան, քարեայ համապատասխան պատուանդանի վրա:

Նախագծի և նախահաշւի ներկայացնելու ժամանակամիջոց որոշվում է չորս ամիս, այն է՝ մինչև 1913 թ. ապրիլ 15-ը:

Ներկայ առարկայի վերաբերմամբ աւելի մանրամասն տեղեկութիւններ ստանալու համար դիմել յուշարձանի կառուցման յանձնաժողովի նախագահ Ա. Ի. Միտկէվիչին (Նոտարական գրասենեակ Երևանեան հրապարակի վրա):

(ա.ռ.) 903. 1—1

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՈՒՊՐԱՎԱՆ

հրաւիրում է ցանկացողներին մասնակցել քաղաքային հիմնարկութիւնների համար մատակարարվելիք հետևեալ առարկաների մրցութեանը.

Ա.

1) Բէնզին I տեսակի—250 փութ, II տեսակի—200 փութ	450 փութ
2) Հանքային իւղ	825 »
3) Հանքային ճարպ	140 »
4) Ցիլինդրային իւղ	450 »

Մրցութեան մասնակցելու իրաւունք ունենալու համար պահանջվում է 100 րուբլի գրաւական:

Բ.

5) Անտրացիտ	8000 փութ
6) Քարածուխ տեղական	2000 »
7) Կօկս	200 »
8) Կուրի ածուխ	200 »
9) Փայտի ածուխ	2500 »

Գրաւական պահանջվում է 100 րուբլի:

Այն անձերը, որոնք ցանկանում են մասնակցել մրցութեան մէջ, պարտաւոր են մուծել Ուպրավայի կասսան գրաւական և յայտարարութիւն ներկայացնել փակ ծրարներում՝ հանդերձ գներով՝ Քաղաքային Ուպրավայի I բաժանմունքը դեկտեմբերի 15-ին 1902 թ. մինչև ցերեկվայ ժամը 3-ը:

Մանրամասն տեղեկութիւններ կարելի է ստանալ Քաղաքային Ուպրավայի Մթերային բաժանմունքում ամէն օր՝ առաւօտեան ժամը 10-ից մինչև 3-ը ցերեկվայ:

(ա. օ.) առ. 902. 3—2

Բեռլինի համալսարանի
ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ

Ներքին հիւանդութիւններ՝ առանձնապէս կրծքի, ԹՈՔԱԽՏԻ և սրտի: Բժշկութիւն նաև տուբերկուլիններով, ՌԱԴԻԻ պրէպարատներով և էլեքտրականութեամբ:

Ընդունելութիւնը ամէն օր, ՆՈՐ ԲՆԱԿԱՐԱՆՈՒՄ առաւօտեան ժամը 9-12-ը և երեկոյեան ժամը 5—7-ը: Սօլօլակ, Բէհբութեան փող. № 23 (անկիւն Դանովսկայա): Հեռախօս 7—92.

(ա.օ.) առ. 699. 100—63

ԻՆՉՈ՞Վ ԵՆՔ ԽՐԱԽՈՒՍԵԼ

«Մշակի» երէկվայ համարում մենք զետեղեցինք մի փոքրիկ նկարագիր այն պատկերահանդէսի, որը կազմել է նկարիչ Բաշինջաղեան իր արհեստանոցում:

Նկարիչը նախ քան իր պատկերները Պետերբուրգ ուղարկելը՝ հանդէս էր դրել նրանց Թիֆլիսի հետաքրքրվողների համար:

Կը գնան պատկերները համառուսական ցուցահանդէս և երևի կը գտնեն գնողներ մայրաքաղաքի նկարասէր գեղարուեստագէտների կողմից: Դա շատ բնական է:

Բայց, անշուշտ, մի խնդիր է ծագում մեր առաջ, թէ ինչու նկարչի ստեղծագործութիւնների մի նշանաւոր մասը չէ դառնում սեփականութիւն մեր երկրի հաստատութիւնների և ազգային գեղարուեստական թանգարանի:

Նկարիչները իրանք անկարող են պահել իրանց ստեղծագործութիւնները այս ու այն հաստատութեան համար. Նրանք նկարում են և հանդէս դնում պատկերները հասարակութեան համար, նշանակելով իւրաքանչիւրի վրա վաճառագինը: Պատկերները դառնում են տրամադրելի գնողների համար, որոնք և ձեռք են բերում նրանց՝ տալով արժէքը: Նկարիչները ապրում են իրանց աշխատանքով, իրանց պատկերների վաճառահանութիւնից ստացած դրամով:

Անշուշտ, նրանք ուրախ կը լինէին, եթէ պատկերները մնային այն երկրում և այն հասարակութեան մէջ, որտեղ իրանք ապրում են, և կամ որոնք մօտ են իրանց սրտին, բայց ինչ կարող են անել նրանք, եթէ իրանց շրջապատը անտարբեր է դէպի գեղարուեստը, դեռ սովոր չէ պատկերների վրա փող ծախսել և որը իր սառն վերաբերմունքով մեռցնում է գեղարուեստագէտի աւիւնը, աշխատելու սէրն ու եռանդը և նոյն իսկ վտանգում է վրձինի անունն ու հռչակը:

Այո, մենք չենք խրախուսել և չենք խրախուսում մեր գեղարուեստագէտներին:

Տխուր և ողբերգական վիճակ է ստեղծված մեր գեղարուեստագէտների համար: Ահա մի նկարիչ, ահա մի քանդակագործ, ահա մանրանկարի մի շնորհք—դրանք տեղ չունեն մեր իրականութեան մէջ, դրանք չեն գնահատվում, դրանք չեն պահպանվում ներքին պահանջի ուժով: Եւ մենք տեսնում ենք, թէ ինչպէս գեղարուեստագէտը կամ նրա ստեղծագործութիւնները գաղթում են ուրիշ շրջաններ, ուրիշ՝ աւելի կուլտուրական հասարակութիւնների մէջ:

Եթէ մեր հասարակութեան առանձին անհատները, մասնաւոր մարդիկ դեռևս ցոյց չեն տալիս կուլտուրական հետաքրքրութիւն դէպի գեղարուեստի ստեղծագործութիւնները, գոնէ այդ բանը անէին մեր հաստատութիւնները: Եւ եթէ, օրինակ, Գէորգեան ճեմարանը, Էջմիածնի մատենադարանը, մեր թեմական դպրոցները և ուրիշ խոշոր կրթարանները, մեր բարեգործական և կուլտուրական հիմնարկութիւններից մի քանիսը ձեռք բերէին մեր նկարիչների պատկերները, անկասկած, հանդիսացած կը լինէին իբրև խրախուսիչներ մեր գեղարուեստագէտների համար, միևնոյն ժամանակ ժողովրդականացրած կը լինէին գեղարուեստի գործերը թէ մատաղ սերունդի և թէ առհասարակ մեր ազգաբնակութեան զանազան խաւերի մէջ:

Գուցէ տեղի ունենայ և ուրիշ նըպաստաւոր հանգամանք—գտնվի մէկը, որ պատկառելի մի գումար նուիրի հիմք դնելու գեղարուեստական թանգարանի և սկիզբը դնի կազմելու գեղարուեստական ստեղծագործութիւնների հաւաքածու, որի մէջ պատկառելի տեղ յատկացված լինի հայ տաղանդի շնորհալի աշխատանքներին:

Անշուշտ, մասնաւոր նախաձեռնութեան վրա յոյս դնելով, անգործ մնալ աններելի է: Մասնաւոր նախաձեռնութեան արածը պատահմունքի գործ է: Բայց այն, ինչ որ ասացինք մենք հասարակական և կրթական հիմնարկութիւնների մասին, դրա իրագործութիւնը կախված է մեր բարի կամքից:

Եւ դա իրագործելի է:

Թող օրինակ դառնայ նախ մի հիմնարկութիւն: Նրան կը հետևեն երկրորդը, երրորդը և միւսները:

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

5 դեկտեմբերի

Աթէնք.—Ծովային մինիստրը իր հրամանի մէջ ողջունում է յունական նաւատորմը:

—

Վիէննա.—Պատգամաւորների պալատը առանց վիճաբանութիւնների ընդունեց պահեստի զինւորների քանակի, զօրաժողովին մասնակցող անձանց ընտանիքներին ապահովելու և ձիեր մատակարարելու օրինագիծը: Մի քանի հռետոր պարսաւեցին չեխ արմատականների օբստրուկցիան: Պատգամաւոր Ֆրէսլը սկսելով իր օբստրուկցիօն ճառը երեկ. ժ. 8-ից՝ չէր վերջացրել առաւօտեան:

Մասարիկի օրգան «Часъ»-ը հերքում է այն լուրերը, թէ իբր Մասարիկը Բէլգրադ է մեկնել, իբրև միջնորդ, Բերխտոլդի հետ ունեցած խօսակցութիւնից յետոյ. Մասարիկը ոչ մի յանձնարարութիւն չէ ստացել:

«Նօր. Բիւրօյի» տեղեկութիւնների համաձայն՝ Բերխտոլդը Ուգէրսկօէ Գրադիշչէի քաղաքագլխին ասել է, որ նա բոլոր ուժերով աշխատում է պահել Աւստրիայի համար խաղաղութիւն և հաստատ համոզմունք է տածում, որ խաղաղութիւնը այսուհետև ևս կը պահպանվի միապետութեան համար:

Ռուս-գալիցիական ակումբը որոշեց, ի նկատի ունենալով լեհական ակումբի անհաշտելի դիրքը համալսարանական հարցում, ձայն տալ զօրաժողովի դէպքում ձեռք առնվող միջոցների օրինագծի դէմ և ամէն կերպ հակառակել ժամանակաւոր բիւջէի ընդունմանը:

—

Պրագա.—«Նարօդնի Պօլիտիկա» լրագիրը հաղորդում է, որ Վիսօկոմիտօյում տեղի են ունեցել Պրացի, Կրալէվի և Պիլզէնի նման ցոյցեր:

«Չեշկի Սլօվօն» հաղորդում է, որ ազգային-սօցիալական կուսակցութեան գործադիր կօմիտէտն առաջարկեց կուսակցութեան անդամներին հանգստութիւն պահպանել: Միւս լրագիրները քննում են Պիլզէնում, Պրացում և Կրալէվում կատարված դէպքերը, ենթադրելով որ այդ դէպքերից կարող է օգուտ քաղել կառավարութիւնը չեխերի դէմ ռեպրէսիաներ ձեռք առնելու համար:

ԲԱԼԿԱՆԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

ՀԱՇՏՈՒԹԵԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋԸ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

5 դեկտեմբերի

Լօնդօն.—Ռէյտէրի տեղեկութիւնների համաձայն, հաշտութեան կօնֆերէնցիայի այսօրվայ նիստում ոչ մի անհարթութիւն չը կար: Գերակշռում էր լաւագոյն տրամադրութիւն, թէև զարմանք յարուցեց այն հանգամանքը, որ թիւրքերը չէին հոգացել ստանալու յետագայ հրահանգներ, թէև յոյների դիրքը զինադադարի հարցում յայտնի էր առաջուց: Թիւրքերն առաջարկեցին, որպէսզի նրանց իրազեկ անեն դաշնակիցների պայմանները: Բալկանեան պատգամաւորներն առարկեցին, որ այդ անօգուտ է, որովհետև եթէ Թիւրքիան կարող չէ բանակցութիւններ վարել չորս պետութիւնների հետ, ոչ մի բանակցութիւն չէ կարող լինել:

Թիւրք պատգամաւորները բացատրում են, որ Թիւրքիան անկարող եղաւ լիազօրութիւն տալ պատգամաւորներին նախօրօք բանակցել յոյների հետ, որովհետև պաշտօնապէս յայտնի չէր, թէ ցանկանում է արդեօք Յունաստանը վարել հաշտութեան բանակցութիւններ. այժմ Բ. Դուռը կը վճռէ, թէ ինչպէ՞ս է հարկաւոր գործել այսուհետև: Թէ ինչ կը լինի այդ վճիռը, թիւրք լիազօրները չը գիտեն, սակայն հաւատացած են, որ Թիւրքիան կամենում է վերջացած տեսնել պատերազմը:

—

«Н. Вр.»-ի Կ. Պոլսի թղթակիցը հեռագրում է. «Լօնդօն մեկնած թիւրք պատգամաւորները, կառավարական շրջանների տեղեկութիւնների համաձայն, ստացել են հետևեալ հրահանգները. «Ոչ մի դէպքում չը զիջել Ադրիանուպօլիսը և Դէդէ-Աղաչը. վճռականապէս ընդդիմադրել Ալբանիայի անկախութեանը, ընդունելով սոսկ նրա աւտօնօմիան օսմանեան պրինցի կառավարութեամբ, Թիւրքիայի պաշտօնական գերիշխանութեան ներքոյ և հնարաւորութեան դէպքում մտցնել նրա սահմաններում Սկիւտարին, Եանինան. ոչ մի ձևով չը համաձայնել, որ Թիւրքիան վճարէ պատերազմական տուգանք. պնդել Մակեդօնիայի աւտօնօմիայի վրա՝ պահելով նրան կից Սալօնիկը, Ուսկիւբը և Մօնաստիրը. աշխատել պահել կղզիները՝ թէկուզ աւտօնօմիայի եղանակով: Վաղօրօք համաձայնվելով ֆրանսիական կառավարութեան հետ, պնդել պահելու հին պայմանները բալկանեան պետութիւններին զիջանելի օսմանեան երկիրներում»: Տեղեակ շրջաններում կարծում են, որ Թիւրքիայի յիշեալ պայմաններում հաշտութիւն կնքելը այնքան հաւանական չէ»:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑ

Կ. Պօլսից հեռագրում են, որ, համաձայն լուրերի, Ֆրանսիան և Անգլիան միացել են Ռուսաստանի այն կարծիքին, թէ անհրաժեշտ է Հայաստանը աւտօնօմ դարձնել Ռուսաստանի հովանաւորութեան ներքոյ: Բ. Դուռը, հրաժարվելով այդ ծրագրից, առաջարկում է իրականացնել Հայաստանում Բերլինի դաշնագրով ձևակերպված բարենորոգումները:

—

Կ. Պօլսից հեռագրում են, որ ներքին գործերի մինիստրը յայտնեց «Рѣчь»-ի աշխատակցին, որ Հայաստանում բարենորոգումներ մտցնելու հարցը Լօնդօնում չէ յարուցվելու:

—

Վիէննայից հեռագրում են. «Թիւրքահայերը, ինչպէս հեռագրում են այստեղ, դիմում են Լօնդօն՝ դեսպանների վեհաժողովին՝ խնդրելով իրականացնել բերլինեան դաշնագրի 61-րդ յօդուածը հայերի դրութիւնը բարւոքելու իմաստով: Ենթադրվում է, որ արդէն Լօնդօն է ուղարկված նախկին պատրիարք Օրմանեանը»:

—

Հայաստանից Օդեսսա եկած փախստականները հաղորդում են, որ հայերի և մահմեդականների միջև իբր թէ կատաղի ընդհարում է տեղի ունեցել:

«ՎԱՆԻ, ԲԻԹԼԻՍԻ ԵՒ ԷՐԶՐՈՒՄԻ ՎԻԼԱՅԷԹՆԵՐԸ» ԳՐՔԻ ԱՌԻԹՈՎ

Ուշադրութեամբ կարդում էի Ս.-Դօի «Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայէթները» վերնագիրը կրող աշխատութիւնը և մտադիր էի իմ տպաւորութիւնները տալ «Մշակի» ընթերցողներին, երբ «Մշակի» 265-դ համարում լոյս տեսաւ Հ. Առաքելեանի գրախօսականն այդ գրքի մասին: Այլ ևս աւելորդ համարելով բազմաթիւ նիւթեր պարունակող այդ գրքի մասին գրել—թէև շատ բան կարելի էր գրել այդ առիթով—կարևոր եմ համարում կանգ առնել Հ. Առաքելեանի արտայայտած մի դարձուածքի վրա, որը պարզում է մի հանգամանք։

«Չոր, սառն վիճակագրական տեղեկութիւնները, բերված Ա.-Դօի ընդարձակ գրքի մէջ, գալիս են սառը ջուր մաղելու մեր գլխին, ցոյց տալով որ հայկական երեք վիլայէթներում... հայ ազգաբնակութիւնը կազմում է 416,667 հոգի, այսինքն 28°/o»։

Բայց ինչու է այդպէս բացագանչում Հ. Առաքելեանը, մի՞թէ բոլորիս համար պարզ չէր այն աւերածութիւնը, այն ամայացումը, որ պարբերաբար կատարվում էր այդ՝ հայկական զուլում վիլայէթներում և մանաւանդ վերջին 3—4 տասնեակ տարիների ընթացքում, սկսած 1877 թւի ռուս-թիւրքական պատերազմի օրերից. մի՞թէ յայտնի չէր, որ այդ զուլում երկրի մէջ հայ ժողովուրդը գնալով նուազում ու նուազում էր և երկիրը դատարկվում էր շնորհիւ մեծ մարդասպան Համիդի բարբարոս քաղաքականութեան։

Սակայն Հ. Առաքելեանի ասածի մէջ կայ մի դառն ճշմարտութիւն, մեր իրականութիւնը բնորոշող ճշմարտութիւն։ Մենք շատ կարդացել և կարդում ենք Թիւրքահայ ժողովրդի մասին. շատ անգամ գրչի մի պառտով վճռողներ եղել են այդ ժողովրդի բաղդը առանց նրան ճանաչելու, առանց նրա կացութիւնը ուսումնասիրելու. կարդացել ենք հատ ու կտոր տեղեկութիւններ, լսել ենք վայր ի վերոյ լուրեր նրա դրութեան, նրա պատրաստականութեան մասին և կազմել ենք անհիմն, նոյնիսկ խաբուսիկ հասկացողութիւն։

Եւ երբ այսօր մի անհատ, ինչպէս Ա.-Դօն է, ճանապարհորդել է այդ վիլայէթները, հաւաքել է թւեր ու փաստեր և այսօր մեր առաջ է դրել այդ թւերն ու փաստերը միանգամայն հակառակ մեր սպասածին ու երեւակայածին, այո, թւում է, որ մեր գլխին սառը ջուր է մաղվում։

Որքա՜ն հրապարակախօսներ գրել և գրում են Թիւրքահայ ժողովրդի մասին, վճռում են նրա բաղդը՝ միևնոյն ժամանակ անգէտ մնալով նրա կացութեան, իրականութեան, վիճակագրութեան, երկրի արդիւնագործութեան նկատմամբ։

Որքա՜ն ճառեր լսել և լսում ենք այժմ էլ, բայց առանց լուրջ աշխատանք թափելու, առանց հարցը ուսումնասիրելու։

Եւ բաւական չէ, որ լուրջ աշխատանքի ձեռնարկող չէ եղել, այլ և անհատ ձեռնարկողները մնացել են առանց խրախուսանքի և աջակցութեան։

Հէնց վերցնենք ներկայ դէպքը. ինչպէս երևում է Ա.-Դօի ներկայ հրատարակութեան առաջաբանից, նրա նիւթերի տպագրութիւնը 2—3 տարի ձգձգվել է, նիւթականի պատճառով հեղինակը չէ կարողացել հրատարակել մտադրված քարտէզները։

Ես հաստատ աղբիւրներից գիտեմ և շատերին էլ յայտնի է, որ այս գրքի հեղինակը հրատարակիչ չը գտնելով տպագրել է իր գիրքը պարտքով, և այդ պարտքի պատճառով հրատարակութիւնը գտնվում է այժմ ուրիշի տրամադրութեան տակ. դեռ չեմ թւում այն զրկանքները, որոնք պայմանաւորված են եղել այդ ճանապարհորդութեան հետ։

Երբ այդպէս է մեր իրականութիւնը, հասկանալի է, որ մենք անտեղեակ ու ապիկար պիտի մնանք լուրջ հարցերի դիմաց, թիւր հասկացողութիւններ կազմած լինենք, և երբ մեզ հրամցնեն չոր և սառն թւերն ու փաստերը, բնականաբար սառը ջուր մաղվածի պէս շուարած պիտի մնանք այդ թւերի և փաստերի դէմ։ Դառն է, բայց իրականութիւն է։ Այո...

Միքայէլ Մէլիքեան

ՎՏԱՆԳԱՒՈՐ ԱՆՑՔ ՄԸ

Հայրենիքը վտանգի մէջ է. ու այս վտանգը միայն Ռումէլիի յատուկ չէ. ամբողջ քաղաքակիրթ աշխարհը ուղղակի կերպով կը շահագրգռէ։ Ասկէց զատ՝ այս օրուան այս վտանգը վաղը աւելի ծանրակշիռ պիտի ըլլայ։ Երկու օրէ ի վեր*) ժամէ-ժամ աւելնալու վրայ են այս վտանգին նշանները։

Այնպիսի անցքի մը առջև կը գտնուինք, որ ստիպուած ենք հաշուի չառնել անվնաս ազատախոհ հաւանականութիւնը, ու քիչ վնասին որ կողմ ըլլալը փնտռելով գիտակցութեամբ զայն ընտրել։

Բերլինի դեսպանախորհուրդը դժուար անգործածելի մեքենայի մը վիճակին վերածած էր Ռումէլին։

Սան-Սթեֆանոյի դաշնագրութիւնը իբրև թէ մեզի նպաստաւոր կերպով կը բարեփոխէր, մինչդեռ ճշմարտութիւնն այն էր թէ այդ բարեփոխումները արդիւնք էին ուրիշ մտածումներու, որոնք ոևէ առնչութիւն չունէին Ռումէլիի մէջ օսմ. պետութեան գոյութեանը հետ։ Դեսպանախորհուրդին մէջ ներկայ եղող բոլոր դիւանագէտներուն համար Ռումէլին այլ ևս եղած էր օսմ. իշխանութենէն։

Միակ մտահոգութիւնն էր որոշել, թէ ով պիտի անցնէր մեր տեղը։

Դեռ չէր որոշուած, թէ Ռումէլին սլաւ ու գերման երկու ժառանգապահանջներէն որուն իշխանութեան տակ պիտի մտնէր։ Երկու կողմերն ալ հաւանեցան տկար կապելով Կ. Պոլսոյ կապել Ռումէլին, ժամանակ շահելով աւելի յարմար ատեն մը վերջնականապէս կարգադրելու համար գործերը։ Շատ ապացոյցներ ունինք այս կէտը հաստատող։ Ամենափայլուն ապացոյցներէն մին կրնանք համարել վերջերս, այսինքն պատերազմի սկիզբը, տէրութեանց ստատու-քուօյի պահպանման մասին տուած հաւաստիքներուն՝ պատերազմի առաջին արդիւնքներուն վրայ փոխուիլը։

Անգլիոյ, Աւստրիոյ, Իտալիոյ և Գերմանիոյ քաղաքականութիւնը, որ Բուլգարիոյ ձեռք քաշել կուտայ Կավալայէն, միւս կողմէ կը թոյլատրէ այդ միևնոյն Բուլգարիոյ յառաջանալ մինչև Բալկաններու հարաւակողմը և Էգիրնէի դռները։ Միջերկրական ծով իջնել արգիլուող այս սլաւոն նորածին, մկրտուած «Դանուբի կուսակալութեան» մինչև Կ. Պոլսոյ դռներուն առջև յառաջանալ ներելի համարուիլը վերջին ատենուան մեր աչալրջութեան արժանի էր, սակայն մեր պետական մարդիկը արթնամտութեան նշան մը ցոյց չտուին։

Այո, Բերլինի դեսպանախորհուրդը խանգարուած մեքենայ մը դարձուցած էր Ռումէլին։ 35 տարի շարունակ ստիպուեցանք խեղճ Փոքր Ասիոյ թարմ ույժերը վատնել՝ բանեցնելու համար այդ խանգարուած մեքենան։ Այսու հանդերձ մեքենան շտկել կարելի չեղաւ, այլ օրէ-օր աւելի խանգարուեցաւ։

Ռումէլին շտկելու համար հանճարեղ միտք մը և ուժեղ բազուկ մը պէտք էր. խելք չկրցանք ընել այսպիսի բարիք մը փնտռելու և շարունակեցինք նախկին խաբեպատիր կործանարար ընթացքը։ Եւ այս խաբեբայութեան հետևանքն ալ այն եղաւ, որ այդ աղուր Անատոլուի մեքենան ալ խանգարուի։ Գործերը երկար ատեն այս վիճակով չէին կրնար ընթանալ։ Որովհետև այսպիսի ամուլ ձեռնարկի մը վախճանը կատարեալ սնանկութիւն է։ Մենք դէպի այդ ուղղութիւնը կը դիմէինք, և ահա վերջին դէպքերը աւելի ևս փութացուցին այն, ինչ որ պիտի ըլլար։ Այս կէտը որոշ է, բայց ոչ մխիթարական։

Օսմանցիութեան համար մեծ դժբաղդութիւն մըն է ձեռքէ հանել Ռումէլին, ու այդ դժբաղդութիւնը կը կրկնապատկուի, եթէ նկատի առնենք Ռումէլին առնելու համար մեր վատնած դարաւոր ջանքերը։ Աշխարհի մէջ չկայ հողամաս մը, որ այսչափ զոհողութիւններով շահուած ըլլայ։

Այո, օսմանցիներուն համար մեծ կորուստ մըն է Ռումէլին կորսնցնելը։ Մարմնի մը սիրտը և թոքերը, բարոյական տեսակէտով, մեր գոյութեան առ հարիւր յիսունը անջատել ըսել է։ Հարկ չկայ բացատրելու թէ որքան ծանր կուգայ այս դժբաղդութիւնը այն իմացականութիւններու համար, որ իրենց կեանքը կը նուիրեն մեր ազգային անցեալին հետ բաղդատմամբ աւելի փայլուն ընելու պատճառները որոնելու համար։

Այո, լաւատեղեակ անձնաւորութիւններու համար Ռումէլին Բերլինի դեսպանախորհուրդի վաղորդայնին իսկ մեր ձեռքէն ելած էր։

Նոյնիսկ եղան ումանք, որ այս մասին մեզի յորդորներ տուին, ըսելով թէ Ռումէլիին տեսակ մը ինքնօրինութիւն պէտք է տալ, ու Անատոլուէն ոչ մէկ զինուոր զրկել հոն, ու թողուլ անիկա որ իր բաղդով տապկուի, ու այս կերպով Ռումէլին փորձանք մը ըլլալէ ազատելով մեր բոլոր բարեկարգական ջանքերը նուիրել Անատոլուի։

Այս անձնաւորութիւններէն մին՝ Հակկը փաշայի դահլիճին կուսակցական շահամոլ ջանքերուն պատճառաւ Ռումէլիի հիմերը քայքայուած միջոցին ըսած էր, թէ «Հակկը փաշա առանց գիտնալու մեծ ծառայութիւն մը կը մատուցանէր Փոքր Ասիոյ, որովհետև Ռումէլիի նման փտախտ եղած մարմինի մը վրայ վիրաբուժական գործողութիւն կատարելուն պատճառ կուտար։ Եթէ Հակկը փաշան Եմէնի խնդիրն ալ այսպէս մը կարգադրէր, որ այլևս Եմէն զինուոր չղրկուէր և Իտալիոյ ալ բարակ կապով մը կապուէր Կ. Պոլսոյ, ապագայ Անատոլուն հաւանական է որ յիշատակարաններով անմահացնէր զինքը»։

Ոչ մէկ օսմանցի կրնայ համամիտ ըլլալ այս գաղափարներուն, որովհետև իր լոկ Անատոլուի համար ճիշդ եղող այս տեսութիւնները օսմանցիութեան և խալիֆայութեան տեսակէտով անընդունելի են։

Այո, կացութիւնը յետին ծայր ծանրակշիռ է, և ընդհանուր մարդկութեան և քաղաքակրթութեան համար մեծ դժբաղդութիւն նկատուելու աստիճան ընդհ. պատերազմի դռներ կը բացուին։ Ասոր համար պէտք է շատ վճռական ընթացքի մը հետևինք։

Այսօր պատերազմական պատրաստութիւն տեսնողներուն ամենն ալ իրենց շահերը կը հետապնդեն։ Բերլինի դեսպանախորհուրդէն ի վեր սլաւոնութեան և գերմանութեան խնդրին փոխակերպուած Ռումէլիի կարեւորութիւնը ըմբռնող բանապետական ռէժիմը, իր բոլոր զեղծումներով հանդերձ, մասամբ մը կը պահպանէր հաւասարակշռութիւնը։

Նախորդ կառավարութիւնը ամէն բան տղու խաղալիք դարձուց։ Զկրցաւ գնահատել յեղափոխութեան արդիւնքը եղող առժամանակեայ դիւրութեան իմաստը ու պատճառ եղաւ, որ ալ աւելի կրկնապատկուին յեղափոխութենէն առջի փորձանքները։ Բոլոր ատեն օսմանցիութեան մէջ թանկագին և կարևոր տարր մը կար։

Մեզի վերաբերեալ հաշիւներ կատարուած ատեն՝ այս տարրը նկատի կառնուէր։ Այդքան թանկագին եղող այդ տարրը ատենօք Օրխան ղազիին կազմած օսմանեան բանակն էր։ Կառավարութիւնը կերպով մը իրենց ձեռքը անցուցած իթթիհադականները մեր այս տարրը իրենց գործիք ըրին։ Զայն վերակազմելու պատրուակով շարունակ քանդեցին։ Նախ քաղաքականութեան միքրոբները զօրանոցները մտցուցին ու հիւանդացուցին զայն։ Վերջէն ալ մարտ 31-ի առթիւ հաստատուած բանապետական կացութեան միջոցին ստորին դասակարգերու շահին ապահովութեանը համար բանակին էական շահերը վտանգուեցան և հայրենիքի փրկութեան գործը հիմնովին խանգարուեցաւ։ Վերջապէս մէկ խօսքով մեր միակ թանկարժէք յենարանը կազմող բանակին կարգապահութիւնը և նուիրականութիւնը քանդեցինք ու խանգարեցինք։ Մեր վարչական ապիկարութեան պտուղները եղող այս չորս դրացի պետութիւնները միանալով մեր վրայ յարձակեցան և անյուսալի յաջողութեամբ մը յաղթեցին մեզի։ Այս կացութիւնը անշուշտ միայն մեր բարձրաստիճան սպաներուն խելքին տարողութիւնը ըմբռնած ըլլալով ամբողջ աշխարհը հիացումի մատնեց, բայց որ Եւրոպայի պետութիւններն ալ զանազան կացութիւններու ենթարկելով ապագային առջև խայտառակեց։

Այս Ռումէլիի անյուսալի խնդիրը սլաւոնութեան շահերուն նպաստաւոր եղանակով մը կարգադրուեցաւ։ Ռուսիա և անոր օժանդակող Ֆրանսա ու Անգլիա կատարուած իրողութիւնը կընդունին և մեզի ալ այս իմաստով համոզելու սկսած են։ Իրենց այս ջանքերը մեր շահերուն կուզեն վերագրել թէև, բայց իրենց արարքը երբէք և երբէք բարեկամական արարք մը չէ։ Գերմանիոյ և Աւստրիոյ հետ իրենց ունեցած մրցակցութեան մէկ պարզ հետևանքն է իրենց այդ ընթացքը։ Միւս կողմէ երրեակ դաշնակցութիւնը կազմող պետութիւնները, սլաւոնութեան յաղթութիւնը տեսնելով, կատարուած իրողութիւնը ճանչնալ չուզեցին և պատերազմի սկսած են պատրաստուիլ. բնական է, որ այս վերջինները մեզի պատերազմը շարունակել պիտի յանձնարարեն։ Այս յանձնարարութիւնը օսմանեան կորովէն ու եռանդէն բոլորովին տարբեր հանգամանք մը ունի։ Բայց և այնպէս տրամաբանութենէ ալ զուրկ չէ, որովհետև Ռումէլիի մէջ սլաւութեան տիրապետութենէն յախուռժող ջանք մը ու ընթացք մը առ այժմ օսմ. վեհապետութեան պահպանումէն տարբեր բան մը չէ։ Այս վերջին ընթացքը մեր ջանքերը կը պսակէ և նոր նոր յաջողութեան յոյսեր կը ծնցունէ։ Մասնաւորաբար պատերազմական գործերու մեծագոյն բաժինը կազմող Գերմանիոյ պատերազմի պատրաստուիլը կապացուցանէ, թէ ինքը իր յաղթութենէն վստահ է։ Բայց եթէ երբէք յաջողի, և իր զինակիցներով ու մեզմով միասին ալ յաջողի և եթէ նոյն իսկ այդ առիթով երէկուան Ռումէլին վերստանանք ալ, արդեօք ապագայի տեսակէտով ինչ շահած պիտի ըլլանք։ Մեր այս շահելիքը կարենալ հասկնալու համար վերոյիշեալ խնդիրներուն թղթածրարները կրկին կըրկին աչքէ անցնել և ուսումնասիրութիւններ կատարել հարկ է։

Այս այսպէս է, որովհետև ոչ թէ միայն Ռումէլիի երկրամասին, այլ բովանդակ օսմ. կայսրութեան կենաց և մահու խնդիրն է, որ մեր աչքերուն առջև պարզուիլ սկսած է։

Առ այժմ ստիպողաբար դառնալիք ճշմարտութիւն մը եթէ կայ, այն ալ սա է, թէ մեր բոլոր ուժովն ու անձնուիրութեամբը այս երկու կողմերէն մէկուն պէտք է յարիլ։ Ստորագրեալս, որ մինչև ցարդ անգլիական քաղաքականութեան ջերմ հետևորդ մը եղած է, այսօր չի կրնար ծածկել այլևս, թէ Վիեննայէն ու Բերլինէն ականջներու անուշ հնչող լաւագոյն ձայներ է որ կը լսուին, թէպէտև այժմէն չենք կրնար ըսել թէ այդ ձայներն ապագայի տեսակէտէն ինչ իրական արժէք մը կը ներկայացնեն։ Այս իրողութիւնը չեմ ծածկեր թէև, բայց միևնոյն ատեն կը փութամ յայտարարելու, որ Ֆրանսա և Անգլիա ևս այդպիսի պարագայի մը մէջ մեր թշնամիներուն կողմը անցած պիտի տեսնենք։ Վտանգաւոր անցքի մը վրայ է որ կը գտնուինք։ Տակաւին երէկ իսկ եթէ Սելանիկի բանակիրներու պետին առաջնորդութեամբ անվայել ու վնասակար բոյկոտաժներու չձեռնարկէինք և Յունաստանը սլաւոններուն գիրկը չնետէինք, Բալկան ապագայ դաշնակցութեան մը գլուխը գտնուելով անկախօրէն ապրելու յոյսը պիտի վայելէինք։ Այսօր այդ յոյսը ևս կորսուեցաւ։

Ասկէ զատ, պէտք է խոստովանիլ, մենք միայն մեծ պետութեան մը լուրջ հովանաւորութեան տակ կրնանք ապրիլ և քառորդ դարու մը չափ առանց կացութեան մը պէտք է ենթարկուած մնանք և մեր գործերն ալ ըստ այնմ պէտք է կարգադրենք։ Այսօր մեր ականջները շոյող ձայներու հեղինակները մի՞թէ երկար ատեն պիտի կրնան մեզի իրենց պաշտպանութեանը տակ պահել։ Ունի՞ն արդեօք այդ յատկութիւնը։ Ամենէն առաջ այս հանելուկն է որ պէտք է լուծել։ Եթէ իրապէս այդ պաշտպանութիւնը կատարելու կարողութիւն ունին և մեզի ալ վերջնական կերպով իրենց զինակցութեան մէջ կրնան առնել, այն ատեն գործը կը տարբերի։ Իսկ եթէ այս մասին տարածուած յոյսերը զօրաւոր չեն և ընդհակառակը վնասներ առաջ կը բերեն, այն ատեն օգուտի տեղ վնաս է որ առաջ կուգայ։ Ես այնպէս կը կարծեմ, թէ միայն երկու մեծ պետութիւն կայ, որ մեզի ապագայի տեսակէտէն երկար ատեն իրենց պաշտպանութեան տակ առնելու կարող են. այդ մեծ պետութիւններէն մէկը Անգլիան է, միւսն ալ Ռուսիան։ Այսօր մեզի յանձնարարուած կարգ մը զոհողութիւնները եթէ ընդունելու ըլլանք, դիւրին է Անգլիոյ հետ համաձայնիլ, մանաւանդ որ Անգլիա բնակչութեան թւի տեսակէտէն ամենէն շատ իսլամ ունեցող պետութիւն մըն է և իբրև իսլամական ընտանիքին ամենէն մեծ անդամը՝ անոր համար կատարուելիք զոհողութիւնները շատ քիչ միայն կը դպչին մեր արժանապատուութեան։ Ռուսիա մեզի բարեկամացնելու գործը իրապէս բաւական դժուարին է։ Միայն թէ սա բացարձակապէս յայտնի է, որ Ռուսիա եթէ մեզի հանդէպ բարեացակամ ընթացք մը հետապնդելու ըլլայ, այն ատեն Անգլիայէն ալ աւելի նախընտրելի պիտի ըլլայ։ Մենք ասիկա կըսենք 30 տարի անընդհատ ռուս քաղաքականութեան հակառակորդի մը հանգամանքով։ Որովհետև այս կերպ կնքուելիք դաշինքի մը փոխարէն ռուսական պաշտպանութեան կրկնապատիկ չափովը պիտի օգտուինք թէ մենք և թէ Ռուսիան։ Երէկ մենք կրնայինք յաւակնիլ Ռուսիոյ մրցորդ մեծ պետութիւն մը ըլլալու։ Այսօր սակայն ժամանակ մը պաշտպանութեան կարօտ որբ մըն ենք։ Մեր կեանքը ապահովելու համար առայժմ գոնէ 20 տարուան անդորրութեան մը պէտք ունինք մեծապէս։ Այդ անդորրութիւնն ալ միմիայն իրական պաշտպանութեամբ մը կամ հովանաւորութեամբ մը կրնայ ըլլալ։ Եթէ երբէք Եւրոպայի մոլեռանդութեանը առաջքը չառնուի իսկ, աշխարհի լուսաւորութիւնը դարձեալ չի կրնար կասիլ։ Այդ լուսաւորութենէն օգտուելիք 300 միլիոննոց մարդկային զանգուած մը բնական է որ ուշ կամ կանուխ աշխարհին ճակատագրին վրայ պիտի ազդէ և բարձր դիրք մը գրաւէ։ Ասոր համար պէտք չէ շուարիլ և հարկ չկայ նոյն իսկ աճապարել մեր այդ ժպտուն ապագային մօտենալու համար, միայն թէ մեր ձեռք առնելիք միջոցներուն մէջ պէտք չէ թերանալ։ Մեր բոլոր հոգիովը և ամեն վայրկեան պէտք է խնդրենք Աստուծմէ, որ բաղդը օգնէ և առաջնորդ հանդիսանայ մեր պետական մարդոց, որպէսզի անոնք կարենան կացութեան ծանրութեան համապատասխան եղանակաւ մը միջոցներ ձեռք առնել։

«Միզանի» խմբագիր՝ Մուրադ

(«Իկդամ»)

---

*) Այս յօդուածը լոյս է տեսել նոյեմ. 15-ին։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՒ. ԱՐԱՍԽԱՆԵԱՆԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԻԹՈՎ

Հանգուցեալ Աւ. Արասխանեանի թաղման կարգադրիչ յանձնաժողովը նպատակայարմար է գտել հանգուցեալի յիշատակը յաւերժացնելու համար հիմնել գրական ֆոնդ, որ կարող է կազմվել թէ յատուկ նուիրատւութիւններից և թէ պսակների համար յատկացված գումարներից եթէ պսակ դնողները կը յայտնեն այդ մասին իրանց ցանկութիւնը։ Ֆոնդը կը հիմնվի Հայոց Գրական Ընկերութեան մէջ։

Երէկ, դեկտեմբերի 6-ին, կատարվեց հանգուցեալ Աւետիք Արասխանեանի հոգեհանգիստը Մողնու եկեղեցում։ Հոգեհանգստի նախաձեռնողն էր Հայ Գրողների Ընկերութիւնը։ Ներկայ էին գրականագէտներ և զանազան հիմնարկութիւնների ներկայացուցիչներ և յարգողներ երկու սեռի։

Հոգեհանգստից յետոյ Գայեանեան դպրոցի վերին դահլիճում տեղի ունեցաւ մի խորհրդակցութիւն, որին մասնակցեցին՝ հայ խմբագրութիւնների, կուլտուրական հաստատութիւնների և հասարակութեան զանազան խաւերի ներկայացուցիչները։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԻ ՔԱՆԻ ԱՄԻՍ ԵՒՐՈՊԱՅՈՒՄ*)

VI

ՊԱՆԿԱԼԹԻԻ ԳԵՐԵԶՄԱՆԱՏՈՒՆԸ
ԵՒ
ԿՈՒՄ-ԿԱՓՈՒ

Կ. Պօլսի պատրիարքարանին կից, նոյն փողոցի վրայ, կայ և մի այլ նման շինութիւն, որ կոչվում է Երուսաղէմատուն։ Գոյութիւն ունի՞ արդեօք գոնէ մի հայ աշխարհիս երեսին, որ այնքան լսած ու կարդացած չը լինի Երուսաղէմի հայոց վանքի, որքան նրա քրոնիկական պարտքերի մասին։ Երուսաղէմատունը մի բնակարան է, ուր նստում է ս. Յակոբի վանքի մշտական ներկայացուցիչը, ուր իջևանում են Երուսաղէմից Պօլիս եկող միաբաններն և ուր... միաբանօրէն դարբնվում են Երուսաղէմի պարտքերի համար արտայայտիչ փաստեր ու վկայութիւններ։ Առանց Երուսաղէմատունը դիմելու էլ ես արդէն գիտէի, որ ուշադրութեան միակ արժանի բանն այդ տան մէջ իրանք «ուխտեալ» վանականներն են, որոնք աշխարհիկ գործերի և մանաւանդ անդուլային արուեստի խորագիտութիւնների մէջ կարող են օրինակելի դասեր տալ նոյնիսկ Մանկունիներին և նրա նման միաբաններին։ Բայց և այնպէս ես հետևեցի ընկերներիս օրինակին և ցանկացայ տեսնել նաև Երուսաղէմատունը։

Փողոցի մեծ դռնից ներս մտնելով՝ կավասների հետ միասին մենք անցանք գաւիթը, որ փոքր ինչ աւելի մեծ էր, քան պատրիարքարանինը։ Մի բուռն հող այնտեղ նոյնիսկ զարդարված էլ կանաչով ու ծաղիկներով։ Սակայն ինքը՝ շինութիւնը, նրա արտաքին պատերն և լուսամուտները, որոնք նայում էին գաւիթն, այնպիսի տպաւորութիւն թողին ինձ վրայ, որ ես խսպառ կորցրի նրանց ներքինը տեսնելու ցանկութիւնը։ Արտաքինը, անշուշտ, շատ անգամ խաբուսիկ է, բայց կան արտաքիններ... որոնց տգեղութիւնը չէ կարող քաւել և ոչ մի ներքին գեղեցկութիւն, մանաւանդ որ այս դէպքում այդ ներքին գեղեցկութիւնը պիտի կազմէին, երևի, իրանք «ուխտեալ» վանականները։

Կավասների ասելով՝

— Աս ալ, էֆէնդիմ, պատրիարքարանին պէս հինուց շինութիւն մըն է, խարխուլ ու կիսաւեր։ Տարբերութիւնը Երուսաղէմատան ու պատրիարքարանին մէջ ան է, որ հոս խոհանոց կայ, ուր ամէն օր կերակուր կեփուի, մինչդեռ պատրիարքարանը զուրկ է խոհանոցէ, և Մանկունի սրբազանի համար կերակուրն ասկէ կը տարուի։

— Ուրեմն Երուսաղէմատունը ծառայում է պատրիարքարանի համար իբրև խոհանոց։

— Կուզէք, ատանկ հասկցէք,—ժպտալով պատասխանեց կավասներից մէկը,— շատ բան կրնայ ատով բացատրուիլ։

— Կրնայ, կրնայ, սիրելիս,—ասացի ես տրամութեամբ.—խոհանոց ունենալն երևելի բան է։

Սակայն բաւական էր. խոհանոց ու աւերակներ տեսնելու փոխարէն՝ աւելի լաւ էր գնալ մայր-եկեղեցին, ուր ժամերգութիւնն սկսված էր արդէն։

Եւ մենք Երուսաղէմատան գաւիթը մտնելով՝ գաւիթից էլ դուրս եկանք և ուղղեցինք քայլերս դէպի եկեղեցի, որ գտնվում է նոյն նեղ փողոցի վրայ՝ պատրիարքարանի ու Երուսաղէմատան հանդէպ։

Մանկութեանս օրերում մայրս ինձ յաճախ տանում էր եկեղեցի, ուր երբեմն եկեղեցական ժամերգութիւնից յետոյ մնում էր առանձնակի աղօթքի։ Ոչ խնդիրք, ոչ աղաչանք և ոչ մանկական գերագոյն զէնք՝ արտասուքը, վերջացնելու աղօթքն և տուն գնալու՝ չէին ազդում մօրս վրայ։ Խեղճ մայր։ Ես նրա միակ որդին էի, և բացի ինձանից նա ոչ ոք չունէր աշխարհիս վրայ։ Սակայն կրօնական վերացման ու զառանցանքի մէջ նա մոռանում էր իմ գոյութիւնս անգամ և յամառօրէն շարունակում իր անձայր ու անվերջանալի «Հաւատով խոստովանիմքը», «Եկեսցէն» ու Նարեկացու բառախաղերը։ Մութն ընկնում էր. եկեղեցու անկիւնները կորչում էին խաւարի մէջ։ Մօրս պաղատագին ծնրադրութիւնը, դէմքի այլայլումն, արտասուքն և ջերմեռանդ աղօթքի երբեմնական կոչերը սարսուռ էին բերում ինձ վրայ։ Հսկայական փայտեայ սիւների անտառը հետզհետէ ծածկւում էր վերահաս խաւարից, և նրա մէջ շարժվում էին անորոշ ստուերներ։ Ահ այդ սիւները։ Շարք-շարք կանգնած էին նրանք՝ Սողոմոնի այդ տիտաններն իրար մօտ՝ սկսած կանանց «ճաղից» մինչև լայն ու ընդարձակ եկեղեցու բեմը, ուր խորին մթութեան մէջ մի կանթեղ էր առկայծում։ Իմ վառ երևակայութեան մէջ անհաշիւ սիւները կերպարանք էին առնում, և նրանցից ամէն մէկն՝ առանձին դէմք ստացած՝ առանձին սպառնալիքով դիմում էր դէպի ինձ։ Ես դողդողում էի, ինչպէս մի թռչնակ ահաւոր վտանգի առաջ...

Իմ հայրենի քաղաքում այդ անտառաշարժ «ժամը» չը կայ այլ ևս. նա վաղուց քանդված է և նրա տեղի վրա կրօնասէր քաղաքակիցները կառուցել են այժմ մի այլ հոյակապ եկեղեցի. սակայն նա դեռ ևս կանգուն ու կենդանի է իմ յիշողութեան մէջ։

Կում-Կափուի մայր եկեղեցում ես իսկոյն յիշեցի անտառազարդ «ժամը»։ Նոյն երկշարք անվերջ սիւները, թէև այստեղ ոչ փայտից, այլ քարաշէն. նոյն բարձր, անգմբէթ առաստաղը, թէև այստեղ թաղածև և ոչ տափակ. նոյն անսահման ընդարձակութիւնը, նոյն հեռաւոր բեմն ու խորանները, որոնք հազիւ երևում են հանդիպակաց մուտքի դռնից, և նոյն ներքին անշքութիւնն ու անբարեզարդութիւնը։ Աւելորդ է ասել, որ Պօլսի մայր եկեղեցին, իր անտառազարդ ընկերակցի պէս, ոչ մի նմանութիւն չունի հին հայկական եկեղեցիների հետ, և աւելի փոքր դիրքով, իբրև սովորական աղօթատուն, համարձակօրէն կարող է պատւաւոր տեղ գրաւել որևէ գիւղի կամ աւանի մէջ։ Թիւրքական մայրաքաղաքի հայոց մայր եկեղեցու առանձնայատկութիւնն այն է, որ այնտեղ կան նստարաններ,—մի յարմարութիւն, որ չը կար իմ հայրենի քաղաքի քանդված «ժամում» և չը կայ, կարծեմ, և ոչ մի տեղ հայ եկեղեցիներում։ Ուրիշ և ոչ մի բան, որ արժանի լինէր յիշատակութեան...

Պօլսի հայ արուեստագէտները, որոնք կառուցել են սուլթանական պալատներ և փառահեղ մզկիթներ, իրանց ճարտարապետական հանճարից մի աննշան բաժին անգամ չեն հանել Կում-Կափուի եկեղեցուն. և ես ստիպված էի խոստովանել, որ կովկասեան ամենայետին գաւառական քաղաքն անգամ, որ հազիւ հազ ապրում է արհեստաւորի օրական չնչին հայթայթանքով, գեղարուեստական աւելի նուրբ ճաշակ ունի եկեղեցի կառուցանելու մէջ, քան աշխարհահռչակ Պօլիսը։

Գուցէ կուզէիք որևէ բան լսել ժամասացութեան մասին.—նա այնպէս է, ինչպէս ամէն տեղ, և նա առանձնապէս ինձ չէր հետաքրքրում։ Նախատօնակ էր, կարծեմ, և տիրացուների սպիտակահանդերձ խումբն եռանդով երգում էր «Ալէլուք և երգ հոգևորք»—երգեր, որոնք դարերի ընթացքում անընդհատ ու միանման կրկնըվելով՝ իբրև բերան սերտած դաս՝ դարձել են ձանձրացուցիչ ու կորցրել իրանց ներքին իմաստ և բովանդակութիւնը։ Ես այդ ժամանակ նայում էի ֆէսաւոր աղօթողների դէմքերին։ Ու տարօրինակ բան, ինձ այն քան չէին զարմացնում կարմիր, ծոպաւոր ֆէսերը, որոնցով նրանք կանգնած էին եկեղեցում, որքան զարմացնում և հետաքրքրում էր կրօնական ջերմեռանդութեան ու երկիւղածութեան այն արտայայտութիւնը, որ յայտնապէս երևում էր ներկայ բազմութեան դէմքերի վրա։ Վաղուց է, որ կովկասեան հայ եկեղեցիներում ես չեմ տեսնում այդպիսի արտայայտութիւն.. Յատուկ է արդեօք թիւրքահայերին կրօնական առանձին ջերմեռանդութիւնը. ունի՞ արդեօք այդ երևոյթը, նրանց բնաւորութեան այդ ուրոյն գիծը, որևէ առնչութիւն մահմեդական ֆանատիկ ամբոխի ազդեցութեան հետ, որին կարող էին ենթարկվել նրանք դարեր շարունակ ապրելով թիւրքերի մէջ և փոխ առնելով նրանցից նաև այդ կրօնական ջերմեռանդութիւնը, ինչպէս փոխ են առել շատ ու շատ բաներ՝ ներքին ու արտաքին և մացրել իրանց բնաւորութեան, նիստ ու կացի, առօրեայ կեանքի ու սովորութիւնների մէջ. թէ դա լոկ հին հայկական միջնադարեան աշխարհահայեացքի մի յամառ

---

*) Տես «Մշակ» №№ 270 և 271.

Խորհրդակցութիւնը բացեց Ց. Թումանեանը, որը և ընտրվեց ժողովի նախագահ։

Ա. Քալանթարի առաջարկութեամբ ժողովը յարգեց հանգուցեալ Աւ. Արասխանեանի յիշատակը ոտքի կանգնելով։

Նախագահը առաջարկեց մտքի փոխանակութիւն հանգուցեալի թաղման և յիշատակի յաւերժացման մասին։

Հարց ծագեց պսակ դնելու մասին։ Տեղի ունեցաւ վիճաբանութիւն, որին մասնակցեցին Սօլովեան, Մարգար և ուրիշներ։

Ժողովը եկաւ այն եզրակացութեան, թէ պսակ դնել չը դնելու խնդիրը չէ կարող ներկայ ժողովի որոշման ենթարկվել և դա պէտք է թողնել իւրաքանչիւր յարգողի տրամադրութեան։

Ա. Աթանասեան յիշեցրեց, որ Արասխանեանն էլ առաջիններից մէկն էր, որ յղացել էր գրականագէտների ընկերութիւն կազմելու գաղափարը, առաջարկեց որոշում կայացնել, հիմնելու մի յատուկ ֆոնդ Արասխանեանի անունով։

Ս. Արովեան աւելի գործնական և հեշտ իրագործելի համարեց յատկացնել ժողովվելիք գումարը Արասխանեանի անտիպ գրուածքների տպագրութեան։

Եղաւ առաջարկ հոգ տանելու, որ վերսկսվի «Մուրճ» ամսագրի հրատարակութիւնը։

Ա. Քալանթար առաջարկեց անմիջապէս դիմել կարգադրիչ յանձնաժողովի ընտրութեան, որը կը զբաղվի հանգուցեալի թաղման վերաբերեալ բոլոր խնդիրներով՝ մարմնի տեղափոխութեան, Թիֆլիսում նրա հանդիպման, թաղման կարգադրութիւնների, պսակների ընդունելութեան, ճառերի դասաւորման և այլ այդպիսի խնդիրներով։

Բժ. Մինասեան առաջարկեց յանձնաժողովի համար ընտրել Գրողների Ընկերութեան վարչութեան անդամներից և Ա. Քալանթարից, Ց. Խունունցից և բժ. Նաւասարդեանից։

Լէօ դէմ է ամբողջ վարչութեան յանձնաժողովի մէջ մտնելուն, այլ գերադաս է համարում անուանել այս ու այն անձի անունը։

Կարծիք յայտնող եղաւ, որ աւելորդ են ծիսական աղմկալի յուղարկաւորութեան պատրաստութիւնները։ Մարդիկ պէտք է կեանքի ժամանակ յարգանք մատուցանէին մարդուն և ոչ նրա մահից յետոյ։

Տ. Յովհաննիսեան նկատեց, որ եթէ մարդիկ կեանքի ժամանակ չեն կարողացել իրանց պարտքը կատարել, պէտք է գոնէ գործչի մահից յետոյ յայտնեն իրանց յարգանքը հանգուցեալի յիշատակին։

Ս. Եսայեան առաջարկում է հետևել նախկին օրինակներին, ինչպէս եղել է Պռօշեանի և ուրիշների թաղման ժամանակ—ընտրել յանձնաժողով, որը զբաղվի թաղման վերաբերեալ խնդիրներով։

Յանձնաժողովի անդամներ ընտրվեցին բացի Գրողների Ընկերութեան վարչութեան անդամներից՝ Ա. Քալանթար, բժ. Բ. Նաւասարդեան, Ց. Խունունց, Տ. Նազարեան, Ն. Աղբալեան, Ս. Արովեան, Ս. Եսայեան, Ա. Ղազարեան, Դր. Վարդանեան, Գ. Վարդանեան (ընկեր Աւ. Արասխանեանցի), Ս. Ցարութիւնեան։ Տիկիններից ընտրվեցին՝ իշխանուհի Ս. Արղութեան և տիկին Դ. Թաղէոսեան։

—

Երէկ տեղի ունեցաւ Կարգադրիչ Յանձնաժողովի նիստը։ Քննվեցին թաղման վերաբերեալ խնդիրները։ Մարմինը կը բերվի Մողնու եկեղեցին։ Եկեղեցական ծիսակատարութեան հոգսը յանձնվեց հայր Զաքկեանին։

Յանձնաժողովի մէջ հարց ծագեց այն գումարների մասին, որոնք կարող են ստացվել պսակի փոխարէն։ Յանձնաժողովը ցանկութիւն յայտնեց, որ այդ գումարներով կազմվի ֆոնդ Արասխանեանի անունով։ Գումարները կը յանձնվեն Գրողների Ընկերութեան, որը մտադիր է իր կողմից տալ հիմնական մի գումար այդ նպատակով։

—

Ա. Արասխանեանի թաղման օրը դեռ որոշված չէ։ Եթէ մարմնի փոխադրութիւնը Ախալքալաքից չուշանայ, այն ժամանակ թաղումը կարող է տեղի ունենալ կիրակի օր։ Սպասվում է հեռագիր Ախալքալաքից։

—

Աւ. Արասխանեանի մահվան առիթով ստացվում են ցաւակցական հեռագրներ նրա յարգողներից, աշակերտներից և բարեկամներից։

Վ. ԴՈՐՕՇԵՎԻՉԻ «ՊԱՏԵՐԱԶՄ» ՅՕԴՈՒԱԾԻ ԱՌԻԹՈՎ

Բերլին, 10 դեկտեմբերի (ն. տ.)

Կարդացի «Մշակի» № 254 ում Վ. Դորօշևիչի «Պատերազմ» վերնագրով յօդուածի թարգմանութիւնը և կը կամենայի մի քանի խօսք ասել այդ առիթով։

Իմ նպատակից դուրս է այստեղ քննութեան ենթարկել նրա անտեսական վարդապետութիւն դաւանողների և պատերազմին դէմ եղողների հասցէին ուղղած անկապ յարձակումները։ Առհասարակ ֆէլիէտօնիստները ծիծաղելի են կացուցանում իրանց, երբ քաղաքականութիւնից են ճառում և փիլիսոփայութիւն անում։

Զարմանալի է, որ եւրոպական կուլտուրայից և «լուսաւորութեան փրկարար ճառագայթներից» խօսող հռչակաւոր ժուռնալիստը այն աստիճան կուրանում է պանսլաւօնական զգացումներով, որ իր օբիեկտիվ մտածելու ընդունակութիւնը կորցնելով՝ հակակուլտուրական քարոզներ է կարդում ընթերցողին։

Եթէ մենք համաձայնենք Վ. Դորօշևիչի հետ, որ իբրք մարդասիրական դիմակների տակ աշխարհակալական ձգտումների համար հանդէս եկած բալկանեան արկածախնդիր դաշնակիցները «ստրկացած» և «բռնաբարված» ժողովուրդների ազատութեան սուրբ միսիայի համար են զէնք վերցրել և արիւն թափում, այն ժամանակ մենք նրանցից կուլտուրական ազգերին վայել պահանջներ պիտի անենք. ում շատ է տրված, նրանից շատ էլ կը պահանջվի։ Եթէ քրիստոնեայ վիրաւորները թիւրքերից չեն խնամվում և չեն բուժվում, այդ դեռ չէ նշանակում, որ նոյն ձևով սլաւօնները պէտք է վարվեն նրանց հետ. այլապէս ինչով պէտք է զանազանվէին նրանք՝ «փրկութեան այդ հերոսները» «բարբարոս» թիւրքերից։

Բայց ահա թէ ինչ է ասում Վ. Դորօշևիչը.

«Դուք պատրաստվում էք օգնել թիւրք վիրաւորներին. հրաշալի միտք։ Եւ այդ միտքը այն մոմենտում միայն մեծահոգի կը լինի, երբ չի մեռնի առանց բժշկական օգնութեան և ոչ մի վիրաւոր չերնօգօրցի, ոչ մի վիրաւոր բուլգար և ոչ մի վիրաւոր յոյն։ Կապեցէք նախ բոլոր ազատութեան մարտնչողների վէրքերը, ապա միայն նրանց հալածողներինը։ Եւ ինչպէս կարող էք դուք ասել ռուս գթասատ քոյրերին, թէ գնա կապիր թիւրքի վէրքերը, այն թիւրքի, որ գուցէ հէնց երէկ բռնաբարել է նրա քրոջը, որը սպանել է նրա եղբօրը. այն թիւրքի վէրքը, որ նոյն իսկ մեռնելու րոպէին կը նայի նրա վրա ինչպէս գեաւուրի, ինչպէս մի շան վրա, երբ միւնոյն ժամանակ մեր եղբայրը առանց օգնութեան և պապանձված շրթունքներով արտասանելով «քոյրիկ» սուրբ խօսքը՝ մեռնում է»։

Ես համոզված եմ, որ մինչև իսկ սլաւօն բժիշկների և կանանց շարքում շատ քչերը կը գտնվեն, որ վերոյիշեալ տողերի հետ համաձայնեն. և եթէ նրանք նոյնիսկ թէօրիապէս համաձայն լինեն այդ մտքի հետ, պատերազմի դաշտում նրանք, սոված ու մերկ, խոլերայի և կատաղի կոմիտաջիների երեսից փախչող վիրաւոր թիւրքին տեսնելով, չեն գլանայ սպեղանի դնելու նրա վէրքերի վրա, կապելու և ամոքելու նրան։

Բարձր և վեհ է բժշկի կոչումը և չը պէտք է արատաւորել նրան ռասսայական ու կրօնական շովինիստ մտքերով. ինչ ազգի և ինչ դաւանութեան ուզում է թող պատկանի վիրաւորը, բժշկի համար այդ հետաքրքրական չէ. կարևորն այն է, որ մարդ արարածների շարքին է պատկանում այդ ողորմելին. և միթէ մարդը բոլոր ցեղերից և կրօններից բարձր չէ. և եթէ վիրաւոր թիւրքը իր վէրքերը կապելիս գթասատ քրոջ կամ բժշկի վրա կը նայէ ինչպէս գեաւուրի վրա, այդ հանգամանքը կարող է միայն կարեկցութիւն շարժել և ուրիշ ոչինչ. բարոյական իրաւունք չունի բժիշկը գլանալու իր օգնութիւնը վիրաւորին նրա ֆանատիկ և տգէտ լինելուն համար. բաւական է, որ նա նոյն մսից ու արիւնից է բաղկացած, ինչպէս որ ամեն մի ջերմեռանդ քրիստոնեայ։

Թիւրքերի մտերիմ բարեկամ սաանաւիրտ Գերմանիայի բժիշկները օգնութեան գնացին և՛ թիւրքերին, և՛ սլաւօններին։

A la guerre comme á la guerre պահանջում է Վ. Դորօշևիչը բժիշկներից և գթութեան քոյրերից. բայց այդ դարձուածը զինւորների համար է միայն ասված, այլ ոչ բժշկի։

Բժշկի բնաբանը կարող է լինել՝ A la guerre comme à la paix.

Դր. Ա. Շահրազ

ՀՈԳԵՆԵԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐԻ ԽՆԴԻՐԸ

Պետերբուրգ, 22 նոյեմբերի

Կան հաստատութիւններ, որոնք առաջին իսկ րոպէից հասարակութեան ուշքն են գրաւում և նրա փայփայանքի առարկան դառնում ու գնահատվում. հասարակութիւնն այդպիսի հաստատութիւնների վրա մեծ յոյսեր է դնում. այդպիսի հաստատութիւններ են՝ 1) Պետերբուրգի կանանց Բեստուժեվեան կուրսերը. սրանք դեռ պաշտօնապէս մինիստրութիւնից իրաւունքներ չեն ստացել, բայց իրանց ցոյց տուած արդիւնքներով այնքան են քաղաքացիութեան ու մինիստրութեան ուշքը գրաւել, որ այնտեղից աւարտողները բոլորն էլ հաւասարապէս վայելում են այն իրաւունքները, ինչ որ ունեն պետական բարձր հաստատութիւններն աւարտողները։ 2) Այդպիսի հաստատութիւն է և Պետերբուրգի հոգենեարդաբանական ինստիտուտը. ընդամենը 3—4 տարի է նրա գոյութիւնը, բայց նա էլ արդէն ունի 4—5 հազար հոգի ուսանող. առաջիկայ տարի կեանք կը մտնեն առաջին ընթացաւարտները. բնական էր, որ իրաւունքի խնդիր ծագէր. և իրօք՝ բաւական ժամանակ է այդ խնդիրը և ուսանողութեան, և պրոֆեսորների մտքերն է յուզում. պրոֆեսորներից մի քանիսը Բեխտերեվի առաջնորդութեամբ ամեն կերպ աշխատում են իրաւունքներ ձեռք բերել, նոյնիսկ պրոֆ. Բեխտերեվը առաջարկել է հրաժարվել իրաւունքներ չը ստանալու դէպքում. միւս մասն ընդհակառակը դէմ է ամեն մի իրաւունքի. այդ խմբակը ցանկանում է պահել ինստիտուտը ներկայ ծրագրով և ներկայ պայմաններով. նրան չի հետաքրքրում իրաւունքը այնչափ, որչափ գիտութեան ազատ լինելը, որչափ և գիտութեան տաճարի ու ոստիկանութեան միմեանցից հեռու լինելը։

Ուսանողութիւնը նոյնպէս բաժանված է երկու կուսակցութեան. մի խիստ փոքր խմբակ իրաւունքներ է պահանջում, իսկ մեծամասնութիւնն, ընդհակառակը, իրաւունքների դէմ է, առանձնապէս հրէայ ուսանողները, որոնք ուսանողութեան $33^{0}/_{0}$ են կազմում։ Իրաւունքներ տալիս՝ ինստիտուտը բնականաբար պիտի ենթարկվի մինիստրութեան որոշ կանօններին, իսկ այդ կանօններն ու օրէնքները պահանջում են $3^{0}/_{0}$ միայն պահել հրէաներից, միւսներին արձակել, ինչ որ տեղի ունեցաւ այս տարի Մօսկվայի և Կիեվի առևտրական ինստիտուտներում։ Ահա այժմ այդպէս է ինստիտուտի իրաւունքներ ստանալու հարցը։

Հոգենեարդաբանական ինստիտուտում կան և հայ սեմինարիստներ. նրանք ընդունվել են ինստիտուտի նոր բացվելու ժամանակ. այժմ այլևս չեն ընդունվում նորերը։

Ինստիտուտն ունի պատմագրական, իրաւագիտական, բժշկական, բնագիտական և մանկավարժական բաժանմունքներ։

Եթէ իրաւունքներ տրվեն և ծրագիրն անխախտ մնայ, ամենամօտիկ ապագայում հոգենեարդաբանական ինստիտուտը կը դառնայ մի խիստ արժէքաւոր և ամուր հիմքերի վրա դրված կրթական բարձր հաստատութիւն։

Misantrop

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

Պետերբուրգ, 5 դեկտեմբերի

Նախագահում է իշխ. Վօլկօնսկին։

Կարդում են ստացված գործերը, ի թիւս որոց սօց.-դեմօկրատների և աշխատաւորականների յայտարարութիւնները կառավարութեանը հարցապնդում անելու՝ ընտրութիւնները կատարելու ժամանակ թոյլատրված անկանոնութիւնների մասին։

Հերթական խնդիրների մէջ, ի միջի այլոց, զեկուցանող Դիմիտրիւկօվը յայտնում է, որ մինիստրների խորհրդի նախագահը նոյեմբերի 22-ին նամակով դիմել է Պետական Դումայի նախագահին և խնդրել քննելու այն բոլոր օրինագծերը, որոնք ներկայացված են եղել կառավարութեան կողմից երրորդ Դումային։ Այդ առիթով մտքերի փոխանակութիւնը տևում է երկար։

Երկու ժամ ընդմիջումից յետոյ, ժամը 3-ին վերսկսվում է նիստը։

Նախագահում է Րօձեանկօն։

Մինիստրների օթեակներում յայտնվում են մինիստրների խորհրդի նախագահն ու մինիստրները։ Պետական Խորհրդի անդամների, սենատօրների, դիպլօմատների, մամուլի և հասարակութեան համար յատկացված օթեակները լի են։ Դուման նախագահի առաջարկութեամբ լիազօրում է նրան, աչքի առաջ ունենալով վաղվայ հանդիսաւոր մեծ տօնը՝ Թագաւոր Կայսրի անուանակոչութիւնը, ուղարկել Նորին Մեծութեանը ամենահպատակ շնորհաւորական հեռագիր։ Հերթական խնդիրը մինիստրների խորհրդի նախագահի յայտարարութիւնն է։

—

Մինիստրների խորհրդի նախագահի ճառը

Պետական Դումայի պարոնայք անդամներ. ողջունելով ձեզ ձեր պատասխանատու աշխատանքների սկզբնաւորութեան համար, ես չեմ կարող չընդգծել նախ և առաջ այն էական տարբերութիւնը այն պայմանների, որոնց մէջ դիմում է օրէնսդրական աշխատանքների չորրորդ Պետական Դուման իր նախորդի՝ երրորդ Դումայի համեմատութեամբ։ Երրորդ Պետական Դուման սկսեց իր աշխատանքը իսկապէս առանց օրինագծերի. նրա առաջ դրված էին կառավարական ոչ միայն չը քննված, այլ և նոյն իսկ ձեռք չը տրված օրինագծեր։ Ուստի բնական է, որ մինիստրների խորհրդի նախկին նախագահ հանգուցեալ ստատս-սեկրետար Ստոլիպինի յայտարարութեան մէջ, որ արեց նա 1907 թւի նոյեմբերի 16-ի նիստում, պէտք է ծրագրէր առաջիկայ օրէնսդրական գործունէութեան համար ընդարձակ ծրագիր։ Դրանից յետոյ յաջորդած հինգ տարվայ ընթացքում կառավարութիւնը ներկայացրեց Դումայի քննութեանը 2500-ից աւելի օրինագիծ, որոնցից 2200-ից աւելին արդէն օրէնքի ոյժ ստացան։ Այդ օրէնքների մէջ կան մի քանիսը, որոնք անցեալ հնգամեակում դրված են իբրև հիմք մեր պետական շինարարութեան։ Բաւական է միայն յիշել 1910 թւի յունիսի 14-ի օրէնքները գիւղացիական հողատիրութեան մասին, 1911 թւի մայիսի 29-ին՝ հողային շինարարութեան վերաբերեալ, 1912 թւի յունիսի 15-ին՝ տեղական դատարանի մասին, 1912 թւի յունիսի 23-ի օրէնսդրութիւնները՝ բանւորների ապահովութեան մասին, ընդարձակ գումարայատկացումները պետական միջոցներից ժողովրդական կրթութեան կարիքների մասին, պետական պաշտպանութիւնը կատարելագործելու և նաւատորմը վերաստեղծելու համար ընդունված միջոցները, զինուորական ծառայութեան վերաբերեալ նոր կանօնադրութեան ընդունելութիւնը, օֆիցէրների կենսաթոշակների և զինւորների ընտանիքների խնամատարութեան օրէնքները, վարկեր բանալը քաղաքների և զեմստվօների համար, զեմստվային ինքնավարութեան տարածումը մի շարք տեղերում, խոշոր յատկացումները Ամուրեան երկաթուղի անցկացնելու մասին, նաւահանգիստների կառուցումը, վերջապէս՝ Խօլմեան առանձին նահանգ կազմելը, Ֆինլանդիայի վերաբերեալ որոշումները կայացնելու կարգի մասին, որոնք ընդհանուր պետական նշանակութիւն ունեն, նոյնպէս և ֆինլանդական քաղաքացիներին իրաւահաւասար դարձնելը մնացեալ ռուսահպատակներին։ Պետական տնտեսութեան վերաբերեալ հարցում երրորդ Պետական Դուման հաստատուն հիմքեր մշակեց, որոնք որոշում են նոր օրէնսդրական հաստատութիւնների բիւջէների քննութեան հարցը։ Այդպիսով չորրորդ Դուման ոտք է դնում այնպիսի մի հողի վրա, որի վրա 5 տարվայ ընթացքում նրա նախորդը քիչ աշխատանք և պետական խելք չէ թափել։ Այդ նպաստաւոր պայմանը բաւականաչափ դիւրացնում է առաջիկայ աշխատանքը։ Շատ բան արդէն արված է, շատ նոր ուղիներ ձգված, որոնցով միայն պէտք է շարունակել ընթանալ, առանց վերադառնալու նրանց սկզբնականին։ Բայց միևնոյն ժամանակ հարկաւոր է հաստատ կերպով յիշել, որ կեանքը ընթանում է առաջ, որ ամեն օր բերում է նոր պահանջներ, որը, չը նայելով երրորդ Դումայի արդիւնաւոր աշխատանքներին, անհնար էր, ի հարկէ, աւարտել։

Գիտակցելով այդ բոլորը, կառավարութիւնը կարծում է, որ չորրորդ Դումայի օրէնսդրական գործունէութիւնը, հանդիսանալով որպէս շարունակութիւն և հետևողական զարգացումն երրորդ Դումայի աշխատանքների, պէտք է միևնոյն ժամանակ ուղղված լինի որոնելու նոր ուղիներ՝ բազմակողմանի կերպով կատարելագործելու ռուսական պետական և հասարակական կեանքը 1905 թ. հոկտեմբերի 17-ի Բարձրագոյն հրովարտակով որոշված զուտ իրաւական հիմունքների վրա։ Խռովութեանը վերջ տալով և վերականգնելով ամբողջ երկրի մէջ հանգիստ աշխատանք, այդ հիմունքների իրագործումը, որոնք բղխում են անմիջական կերպով Բարձրագոյն ցուցումներից, դարձաւ հնարաւոր կառավարութեան և օրէնսդիր հաստատութիւնների համար։ Այդ պատճառով նրանց միահամուռ աշխատանքը յօգուտ հայրենիքի կարող է շարունակվել հանգստօրէն, հաստատուն հաւատով, թէ Նորին Կայսերական Մեծութեան Ինքնակալ կամքով շնորհված և Նրանից պահպանված գոյութիւն ունեցող պետական կազմի հիմնական սկզբունքները կը մնան անյողդողդ։

Այդ հաստատուն հողի վրա պետական հաստատութիւնները կոչված են անյողդողդ պահպանելու նոյն ռուսական պետական կեանքի հիմունքում դրված այդ կեանքի պատմութեամբ նուիրագործված պետութեան միութիւնը և անբաժանելիութիւնը և նրանում ռուս ժողովրդի ու ուղղափառ դաւանութեան գերիշխան դրութիւնը։ Այս սկզբունքները չեն սպառում, ի հարկէ, օրէնքի բացարձակ բարեացակամ վերաբերմունքը դէպի Ռուսաստանի այլ ազգութիւնների հպատակները, որոնք ճանաչում են Ռուսաստանը իրանց հայրենիք և պատրաստ են խաղաղութեամբ աշխատել նրա բարգաւաճման ու ամրապնդման համար և իրանց բարեկեցութիւնը ու անգամ իրանց գոյութիւնը տեսնում են մեծ ռուսական ժողովրդի միութեան մէջ։ Ռուսական երկգլխեան Արծուի հովանու տակ բաւականին ընդարձակ է մեր հայրենիքը իրա մէջ բնակվող բոլոր ժողովուրդների հանգիստ կեանքի համար։ Այդ հիմնական սկզբունքները ապահովում են և դաւանանքի ազատութիւնը բոլորի նկատմամբ։ Չեն սպառնում այդ սկզբունքները, վերջապէս, Ֆինլանդիայի Մեծ Իշխանութեան տեղական օրէնսդրութեանը, կառավարութեան ինքնատիպ կենցաղի պահպանութեանը, սակայն պայմանով, որ Ֆինլանդիան սերտ միացած լինի պետութեան հետ և մշտապէս ենթակայ լինի նրա պետական օրէնսդրութեանը համապետական նշանակութիւն ունեցող հարցերում։

Զգալով վերոյիշեալ նպատակներին, որոնք բովանդակօրէն առաջնորդ ծառայեցին կառավարութեան գործունէութեան մէջ նախկին հինգ տարիներում, նա ամենից առաջ իր պարտականութիւնն է համարում Դումայի ուշադրութիւնը դարձնել այն հանգամանքի վրա, որ ինքնին անհրաժեշտ է աւարտել այն օրինագծերի քննութիւնը, որոնք ներկայացվեցին երրորդ Դումային և մնացել են չը քննված։ Բացի այդ օրինագծերից կառավարութիւնը առաջարկելու է Դումայի քննութեանը հետևեալ նոր օրինագծերը՝ վերաբերեալ տեղական ինքնավարութեանը և վարչութիւններին։ Այդ մասը պահանջում է արմատական վերամշակութիւն։ Կառավարութիւնը այդ մասով արդէն որոշ քայլերի ձեռնարկել է։ Ապա ժամանակակից կեանքի պայմանները պահանջում են արմատապէս բարեփոխել ոստիկանական մասը, որի վերաբերութեամբ նոյնպէս կառավարութիւնը լրջօրէն աշխատում է։

(Կը շարունակվի)

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Երէկ, Նորին Կայսերական Մեծութեան Թագաւոր Կայսր Նիկոլայ Ալեքսանդրովիչի անուանակոչութեան օրը, զինւորական տաճարում մատուցվեց հանդիսաւոր պատարագ, որից յետոյ կատարվեց գոհաբանական մաղթանք։ Պատարագին և մաղթանքին ներկայ էին Կովկասի փոխարքայ կոմս Ի. Ի. Վօրօնցով-Դաշկով՝ կոմսուհի Ելիզավետա Անդրէևնայի հետ, փոխարքայի օգնականներ սենատօր Վատացի և գեներալ Շատիլով, փոխարքայի խորհրդի անդամները, գեներալները, բոլոր զօրամասերի հրամանատարները, զանազան բարձր պաշտօնեաներ, փոխ-նահանգապետ Պանով, ազնուականների պարագլուխը, քաղաքագլուխ Ալ. Խատիսեան՝ քաղ. վարչութեան ամբողջ կազմի հետ և այլն։ Մաղթանքի ժամանակ Արսէնալի սարից պարպվեց սահմանված 21 թնդանոթը։ Մաղթանքից յետոյ տաճարի ընդարձակ բակում փոխարքայի ներկայութեամբ կայացաւ զօրահանդէս երաժշտութեան նուագածութեամբ։ Նոյն օրը պատարագ և մաղթանք եղաւ Վանքի հայոց եկեղեցում, կաթօլիկների և լիւթերականների աղօթատներում, հրէաների սինագօգում և մահմեդականների մզկիթում։ Քաղաքը առաւօտից զարդարված էր դրօշակներով, իսկ երեկոյեան հրավառված էր։ Կառավարական հիմնարկութիւններում և կրթական հաստատութիւններում պարապմունքներ չը կային։

◆ Վաղը քաղաքագլուխ Ալ. Խատիսեան և իշխ. Գ. Թումանեան մեկնում են Բագու Թիֆլիսի պոլիտեխնիկումի հարցի առիթով։

◆ Այսօր, ուրբաթ, հերթական jour-fixe-ը Գրական-Գեղարուեստական Սալոնի՝ նուիրված է բանաստեղծ Գարեգին Եպիսկոպոս Սրուանձ-

---

ու դժուարահալած մնացորդ է Թիւրքիայի նման մի երկրում, ուր ամեն ինչ վաղուց ի վեր քարացած է և ուր ամեն մի անհատի ու ժողովրդի առաջադիմութեան հանդէպ կանգնած են անյաղթելի պարիսպներ—դժուար է ասել և դժուար է հաղճեպ բացատրութիւն գտնել...

Երեկոն վրա էր հասնում. ու թէև արևը մայր չէր մտել և նրա ճառագայթները լուսամուտներից ներս թափանցելով՝ խաղում էին եկեղեցու ապակեայ ջահերից կախված զարդարանքների հետ, բայց և այնպէս լայնարձակ տաճարի անկիւններում խնկարկութեան ծուխի հետ միասին՝ ըստուերներ էին հաւաքվում։ Այժմ ոչ այդ ստուերներն և ոչ նրա սիւների անտառն ինձ չէին կարող ահաբեկել. այսու ամենայնիւ պէտք էր դուրս գալ, դուրս գալ դէպի աւելի լայն ու աւելի գեղեցիկ աշխարհ, ուր մարդու հոգու վրա չեն ծանրանում հնադարեան կապանքներ, դէպի ազատ ու անկաշկանդ բնութիւն, որի հրաշալի ու խորհրդաւոր գաղտնիքների ուսումնասիրութիւնը թերևս այն միակ կրօնն է, որ վայել է մարդուն։

Եւ մենք՝ եկեղեցու գաւթում մի քանի գերեզմաններ դիտելուց յետոյ, ուր թաղված են «ազգին բարերարները», գնացինք Մարմարայի ափը, որ մի քանի տասնեակ քայլ աւելի հեռու էր այնտեղից։

Անցնելով երկաթուղու գիծը՝ մենք կանգնեցինք մի աւերակ պարսպի վրա, որ երևի հասցել էր բիւզանդական տիրապետութեան ժամանակից, իբրև տխուր յիշատակ կարած անցեալի։ Մեր առաջ տարածվում էին Պրօպոնտիսի կապտագոյն ջրերը։ Հարթ, ինչպէս ապակի, ձգվում էին նրանք մինչև Ասիայի ափերը և հեռաւոր Իշխանաց կղզիները, որոնց լեռներն ու ծովեզերեայ ապառաժները՝ թեթևակի շառագունած արևամուտի շողերով՝ պարզ երևում էին մեր դիտարանից։ Զանազան ձևի ու մեծութեան շոգենաւեր ու առագաստաւորներ երբեմն-երբեմն ակօսում էին ծովի կուրծքը, և նրա վրդոված ու դժգոհ ալիքները մերթ ընդ մերթ հասնում և բախվում էին աւերակ պարիսպը։

Ես երկար նայում էի ծովին և արևամուտի ճառագայթներին, որոնք լուսաւորում էին Ղալաթիայի բարձր աշտարակը ուռուցիկ Պերան և ասիական ափի տների շարքերն, ու իմ մէջ վերլուծում տպաւորութիւններս։

Ուրախ չէին նրանք՝ իմ այդ տպաւորութիւններս։ Բայց ինչ կը կամենայի ես։ Արդեօք իմ ցանկացածս այն էր, որ խարխուլ պատրիարքարանի փոխարէն ես գտնէի մի հոյակապ պալատ, մի Չըրաղան, կամ Դօլմա-Բախչէ, և խղճուկ, շատ խղճուկ մայր-եկեղեցու տեղ՝ մի փառահեղ տաճար, մի Այա-Սօֆիա։

Ամենևին։ Ես այդ չէի երազում, և ինձ համար ամենևին ցաւ չէր այդ երկու շինութիւնների այժմեան դրութիւնը։ Ցաւ էր միայն այն, որ հայկական կեանքը, ինչպէս մեզանում, այնպէս էլ Թիւրքիայում, պտոյտ է գալիս դեռ ևս, համարեա բացառապէս, այդ երկու հիմնարկութիւնների շուրջն և նրանց գաւիթների մէջ, ու սպասում հայ ճանապարհորդին հեռաւոր Պանկալթիից գալու Կում-Կափու՝ գրեթէ ոչինչ տեսնելու համար։

Ս. Մխիթարեան

տեանին և հանգուցեալ Աւետիք Արասխանեանի յիշատակին։ Հրաւիրվում են՝ բացի մշտական այցելուները Սալոնի և կրթական, բարեգործական, կուլտուրական հաստատութիւնների ներկայացուցիչները, «Մուրճի» աշխատակիցները, հանգուցեալ ուսուցչի աշակերտները և հրապարակախօսի յիշատակը յարգողները։ Սկիզբը ժամը 8-ին երեկոյեան։

◆ Թիֆլիսի նահանգապետը մեկնեց Դուշէթի գաւառը։

◆ Քաղաքային վարչութիւնը առաջարկում է Թիֆլիսի հայոց կոնսիստորիային՝ յորդանանը դարձեալ կառուցանել Վանքի աւագ եկեղեցու բակում։

◆ Գիտակցելով «շուտափոյթ օգնութեան» ահագին օգուտը քաղաքի ազգաբնակութեան համար՝ քաղաքային վարչութիւնը առաջարկում է դումային ընդունել այդ գործը քաղաքային ինքնավարութեան տնօրէնութեան ներքոյ, ընդունելով հանդերձ տարեկան ծախք 4500 ր., 500 ր. եկամուտի հետ։

◆ 1912 թ. Թիֆլիս քաղաքի կողմից նորակոչ զինուորների թւից պակասում է 42 մարդ։

◆ Այսօր Արտիստական Թատրոնում կը ներկայացվի Զարէչնիի դրամ. խմբի շնորհալի դերասանուհի Արգուտինսկայա-Կոզլովսկայայի բենեֆիսին առաջին անգամ Բըշկովի «Змѣйка» պիէսը. Թէ յարգելի դերասանուհու անունը և թէ յայտնի նոր պիէսի հետաքրքրութիւնը անշուշտ կը գրաւեն մեծ բազմութիւն դէպի թատրոն։

◆ Այսօր Արքունական Թատրոնում առաջին անգամ իտալացի երաժշտագէտ Ճապօլիտոյի անմիջական ղեկավարութեամբ կը տրվի նոյն հեղինակի «Черный тюрбанъ» կոմիքական օպերան։

◆ Վաղը Թիֆլիսի Հասարակական ակումբում ներկայացումից յետոյ կը լինի գրոյց։ Կը ներկայացվի «Вѣрочки» և «Ошибка», որոնց մէջ շօշափված է ընտանիքի հարցը։

ՄԱՄՈՒԼ

Արշակ Բաբեանի վարմունքը Յովնանեան դպրոցի հոգաբարձական ընտրութեան գործի մէջ սաստիկ քննադատութեան առարկայ դարձած լինելով՝ մենք շուտով կը յայտնենք մեր կարծիքը այդ մասին։ Մենք արդէն տպեցինք մի հայ գործչի առաջարկած անկէտը։ Այսօր առաջ ենք բերում «Տարազ» հանդէսի կարծիքը.

Ներկայ նոյեմբերին Թիֆլիսում կայացան պատգամաւորական ժողովներ և ընտրվեցին հոգաբարձուներ Ներսիսեան դպրոցի և Յովնանեան-Մարիամեան ուսումնարանի համար։

Ներսիսեան դպրոցի շուրջ Ալ. Խատիսեանի նախագահութեամբ և Ս. Յարութիւնեանի փոխ-նախագահութեամբ մի քանի օր պատգամաւորական ժողովը զբաղվեց զեղծումների, աշակերտների յետամնացութեան, ուսուցիչների անհամերաշխութեան, տնտեսական և ֆինանսական մասը աչքաթող և անխնամ վարելու մասին խնդիրներով։ Այցելեցին Մանթաշեանի դրամով կառուցված Ներսիսեան ուսումնարանի նոր շէնքը և ընտրեցին հոգաբարձուներ այն կուսակցութիւնից, որի ձայները աւելի շատ էին։

Տխուր, անօրինակ և անսահման վրդովեցուցիչ հանգամանքներում կայացաւ Յովնանեան օրիորդաց ուսումնարանի հոգաբարձուների ընտրութիւնը։ Այստեղ կատարվեց ոճիր. այլ անուն մենք չենք գտնում առ այժմ։ Ձայները երկու կուսակցութիւնների համահաւասար էին, և սրանցից մէկը դաւաճանեց իր ընկերներին ու պայքարի վերջին վայրկեանին գաղտագողի անցաւ հակառակ կուսակցութեան կողմը։ Օր ցերեկով, այսպէս ափաշկարա վերաբերմունք, ի հարկէ գաղափարի, համոզումի, ըմբռնումների տարբերութիւնը չէ։ Անշուշտ խօսք չէ կարող լինել և կուսակցական մանեօվրի մասին։ Կատարված է դաւաճանութիւն, որի դատը, մեր կարծիքով, նրան ընտրողները պարտաւոր են յանձնել այն կորպորացիաներին, որոնց պատկանում է ուխտադրուժը։

Եւ նա է՝

1) Թիֆլիսի քաղաք. իրաւասու.
2) Ինժենէր.
3) Հասարակ. քաղաք. անշուշտ մի որեւէ կուսակցութեան դաւանակից։

Ուրեմն Թիֆլիսի քաղաք. իրաւասու, ինժենէր և հասարակական գործիչ, Յովնանեան օր. ուսումն. համար հոգաբարձու ընտրելու համար որոշ կուսակցութեան (մշակական-առաջադիմական) ձեռքով ընտրված ուխտադրուժ պատգամաւոր Արշակ Բաբեանին պէտք է յանձնել նախ Թիֆլիսի քաղաք. բոլոր իրաւասուների խորհրդին, քաղաքագլխի նախագահութեամբ դատաստանին, ապա իր ընկերակից ինժենէրների և յետոյ քաղաք. բոլոր կուսակցութիւնների դատաստանին՝ որակելու նրա կատարածը և սահմանելու պատիժը։ Անտարակոյս՝ ժամուլն էլ ձեռնպահ չը պիտի մնայ իր հրապարակական դատաստանից։

Մենք Արշակ Բաբեանի այս անօրինակ կատարածը համարում ենք հասարակական գործչի բարոյական ֆիզիօնոմը վերջնականապէս այլանդակված և անկարելի նրան այսուհետև վստահել հասարակական մի որևէ պաշտօն։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 5 դեկտեմբերի

Հաճեցէք հետեւեալ նամակիս տեղ տալու։

Յայտնի է, որ 1906 թ. Ղազախի մօտ 39 հայ գիւղերից նահանգապետը պահանջում էր մեծ գումար իբրև տուգանք։ Խեղճ գիւղացիները, գտնվելով յուսահատ դրութեան մէջ, իրանց քահանաներով եկել էին Թիֆլիս առաջնորդարան՝ օգնութիւն խնդրելու։ Իբրև ղազախեցի, պ. Յ. Ալիխանեանը աշխատում էր օգնել դրանց, ուստի և դիմեց իմ աջակցութեան՝ իբրև մօտ ծանօթի և Նպաստամատոյց Յանձնաժողովի անդամի։ Հրաւիրելով մի քանի մարդկանց իմ տունը, և երկար խորհրդակցելուց յետոյ վճռեցինք Ներսիսեան դպրոցի գումարից փոխ առնել 35,000 ր., որքան պահանջում էր նահանգապետը։ Այդ ժամանակվայ հոգաբարձուները հանգուցեալ սրբազան Սաթունեանի նախագահութեամբ վճռեցին այդ գումարը տալ՝ ազատելու ժողովրդին պատուհասից, իսկ Ներսիսեան դպրոցի գումարը ապահովելու համար՝ մենք մի քանի անձինք գրաւոր պատասխանատւութիւն յանձն առանք կորուստի համար։ Եւ ապա ամեն միջոց գործ դրինք հաւաքելու այդ գումարը գիւղացիներից և յանձնելու Ներսիսեան դպրոցին։ Անաջող տարիները շարունակելով՝ գիւղացիները, ինչպէս խոստացել էին, չը կարողացան շուտով վճարել և ուշացրին։ Բացի պ. պ. Յ. Ալիխանեանի և Ա. Ամիրաղեանի, ինչպէս ղազախեցիների, աշխատութիւնը՝ գիւղացիներից դրամ հաւաքելու, մենք նոյնպէս խնդրեցինք պ. պ. Արշակ Թումանեանցին և Ս. Տէր-Պօղոսեանին, և նրանք ամենայն յօժարութեամբ ընդունեցին և բաւական գումար հաւաքեցին ու յանձնեցին դպրոցի վարչութեանը։ Ամեն մէկից անունից ժողովված և դպրոցի գանձարանը մացված գումարները ընդհանուրի հաշւին էին վերաբերում. մենք, մուրհակ ստորագրողներս, պատասխանատու ենք միայն կորստին, որքան գիւղացիներից պակաս կը ստացվի կամ որքան մեզնից ծախսեր անենք. այս բոլոր հաշիւները կամ մենք չորս ստորագրողներս մեր մէջ պէտք է մաքրէինք և կորուստը չորս հոգով վճարէինք, լրացնելով փոխ առնված գումարը Ներսիսեան դպրոցին և կամ հոգաբարձական նիստում պարզէինք այդ հաշիւը։ Իմ ձեռքում ունեցածս հաշւից, որ ստացել էի դպրոցից, մինչև այս տարվայ մայիսի 24-ը մտել է Ներսիսեան դպրոցի գանձարանը 30 960 ր.։ Մնում էր ուրեմն դեռ ստանալի 4040 ր.։ Եթէ այդ թւականից մինչև այսօր նոր գումար չէ ստացված, նշանակում է մեր կորուստը 4040 ր. է։ Ուրեմն իմ բաժինը, չորսից մէկը, լինում է 1010 րուբլի։ Թէև ես իմ գրպանից վճարել եմ 1200 ր., այնու ամենայնիւ ես հոգաբարձու պ. Կաճկաճեանին առաջարկեցի ստանալ ինձանից դարձեալ 1010 թ. և թողնել ինձ ազատ։

Նա գնաց, և փոխանակ պատասխան բերելու, յանկարծ ստանում եմ կոչնագիր դատարանից, որից երեւում է, որ հոգաբարձութիւնը ինձ դէմ պահանջ է սկսել՝ և մի կողմն թողնելով թէ պ. Յ. Ալիխանեանին և թէ պ. Ամիրաղեանին՝ ինձանից և պ. Լևոն Ղուլեանից է միայն պահանջում մնացորդ գումարը, այն է՝ գիւղացիների չը լրացրած գումարը։

Ինչ հիման վրա է հոգաբարձութիւնը թոյլ տուել իրան այսպիսի մի անկօրրեկտ վարմունք հանդէպ մի մարդու, որ, կըրկնում եմ, դեռ իր գրպանից 1200 ր. է տուել, հանդէպ մի մարդու, որ ամբողջ 25 տարի հոգաբարձու է եղել Ներսիսեան դըպրոցում և օգնել է նրան այն նեղ օրերում, երբ նա նիւթական ճգնաժամի մէջ էր գտնվում։

Եթէ պ. պ. Յ. Ալիխանեանը և Ամիրաղեանը յայտնել են հոգաբարձութեան, որ գիւղացիներից այնքան դրամ է հաւաքված, որ իրանք ազատվում են, հոգաբարձութիւնը պէտք է լաւ իմանար, որ ամեն մի հաւաքած գումար բոլոր մեր երաշխաւորների անունով է մտցված դրամարկղը, և ոչ ոք իրաւունք չունի ասելու, թէ գիւղացիներից հաւաքած գումարը իր բաժին երաշխաւորութեան հաշւին պէտք է դնել։

Եթէ նոյն իսկ ընդունենք, որ հոգաբարձութիւնը հակառակն է մտածել, այդ դէպքում նոյնպէս նա իրաւունք չունէր գանգատ անելու ինձ դէմ, ահա ինչ պատճառով. Պարոնայք Ջաղէթեանը, բժ. Քալանթարեանցը և Արշակ Թումանեանցը ի դիմաց 35,000 ր. գումարի մացրել են 13,000 ր., ուրեմն մեր չորսի վրա (ես, Լ. Ղուլեան, Ալիխանեան և Ամիրաղեան) մնում էր 22,000 ր., հետեւաբար իմ բաժինն է 5500 րուբլի։ Արդ, իմ անունից մտցված է 5000 ր., ուրեմն ես մնում եմ պարտ միայն 500 ր., որ ազատվեմ երաշխաւորութիւնիցս։ Բայց ես առաջարկեցի հոգաբարձութեան 1000 ր., չը հաշւած մի այլ 1200 ր., որ անցեալներում վճարել եմ դարձեալ. ուրեմն 500 ր. իմ պարտքի փոխարէն տալիս էի 2200 ր. և սակայն հոգաբարձութիւնը, անարդար կերպով, ինձ դէմ գանգատ է սկսում դատարանում, ենթարկելով ինձ անհանգստութեան և զուր ծախքերի։

Վրդովված՝ հոգաբարձութեան այս տգեղ քայլից. կրկնում եմ, հանդէպ մի մարդու, որ 25 երկար և ձիգ տարիներ ծառայել է դպրոցին, օգնել նրան լաւելայն իր նեղութեան ժամանակ, առաջարկել վճարել աւելին, քան իր բաժինն է ընկնում, զայրացած նրա այդ վարմունքից, ես դիմեցի սրբազան նախագահին, խնդրելով իմ ներկայութեամբ քննել հաշիւները, որոնց պարզվելուց յետոյ՝ ես կը դիմեմ ուր հարկն է։

Հոգաբարձութեան այդ տգեղ քայլը ենթարկում եմ նաև հասարակութեան դատաստանին։

Ալ. Մելիք-Ազարեանց

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Բեռլինում ապրող աւստրիացիք խմբերով հայրենիք են մեկնում։

◆ Ռուսաստանում ապրող ունգարացի օֆիցերները պատուէր ստացան վերադառնալ հայրենիք։

◆ Իտալիան աւստրօ-սերբիական, անգամ ռուս-աւստրիական պատերազմում միալու է չէզոք։

◆ Ռուսաց արտաքին գործերի մինիստրութեան առանձին յանձնարարութիւնների պաշտօնեայ կամէր Իւնկէր Բոդկէվիչը մեկնեց Լօնդօն տանելով հետը խաղաղ կօնֆերէնցիայի առիթով ռուսաց դեսպանին տրված հրահանգները։

◆ «День»-ը հաղորդում է, որ Վիլհէլմ կայսրը գրաւոր կերպով հրաւիրեց զինւորական մինիստր գեներալ Սուխոմլինովին գալ Բեռլին Ծննդեան տօներին։

◆ Պուանկարէն յայտնեց պատգամաւոր Բէռուլին, որ նա անկարող է հրապարակով յայտնել ռուս-ֆրանսիական դաշնակցութեան պայմանագրի բովանդակութիւնը։

◆ Մոսկվայում կախվեց 13 տարեկան մի տղայ վատ թւանշանի պատճառով։

◆ Մի ռուս յայտնի ռազմագէտ յայտնել է, որ Ռուսաստանը հազիւ թէ պաշտպանէ Սերբիային, որովհետև նա դեռ պէտք է զօրաժողով կայացնէ։ Բացի դրանից պէտք է յիշել, որ Գերմանիան Ֆրանսիայից աւելի ուժեղ է։

◆ Մեծ պետութիւնները սկզբունքով համաձայնեցին, որպէսզի վերջնական երկրորդ կօնֆերէնցիան գումարվի Պարիզում։

◆ Պրեմիէր-մինիստր Քեամիլ-փաշան վերջնականապէս եկաւ այն համոզման, որ Թիւրքիայի փրկութիւնը կախված է միմիայն Գերմանիայից։

◆ Աւստրիան լիակատար զօրաժողովն աւարտելու է դեկտեմբերի 20-ին, երբ նրա կողմից կը հետևէ վճռված քայլ։

◆ Սուլթանը հեռագրով պատուիրեց Լօնդօն մեկնած թիւրք լիազօրներին միալ խաղաղասէր, բայց և ոչ մի դէպքում չը զիջել Ադրիանուպօլիսը, ուր հանգչում է նրա պապերի աճիւնը։

◆ Կ. Պօլսում հեռագիր է ստացվել, որ Եանինը ընկել է յոյների ձեռքը։ Երեքօրեայ անաջող դիմադրութիւնից յետոյ թիւրք զօրքերի հրամանատար Էսադ-փաշան անձնատուր է եղել։

◆ Սօֆիայից հեռագրում են, թէ սպասվում է, որ պատերազմը վերսկսվի Թիւրքիայի հետ։

◆ Վիէննայից հեռագրում են, որ կարգադրված է դադարեցնել յետագայ պատերազմական գործողութիւնները։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ց. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ



Ատամնամսի
ամենալաւ ողողիչը
Մի սրուակը 85 կոպէկ. մեծ սրուակի գինը 1 րուբլի 50 կոպէկ։
(M. 378072/378082)

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ձմերային երթևեկութիւն)

Ժամերը նշանակված են Թիֆլիսի ժամանակով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է

ԲԱԳՈՒ.—Արագ գնացքը № 2—10 ժ. 12 ր. առ., հասնում է Աղստաֆա 12 ժ. 30 ր., Գանձակ 2 ժ. 55 ր., Եւլախ 4 ժ. 26 ր., Հաջի-Կաբուլ 8 ժ. եր., Բագու 11 ժ. 8 ր. գիշ.։ **Պօստատար գնացքը** № 4—12 ժ. 36 ր. գիշ., հասնում է Աղստաֆա 3 ժ. 30 ր. գիշ., Գանձակ 6 ժ. 41 ր. առ., Եւլախ 8 ժ. 38 ր. առ., Հաջի-Կաբուլ 1 ժ. 13 ր. ցեր., Բագու 5 ժ. 36 ր. ցեր.։ **Մարդատար գնացքը** № 6—6 ժ. 31 ր. եր., հասնում է Աղստաֆա 8 ժ. 51 ր. եր., Գանձակ 11 ժ. 20 ր. գիշ., Եւլախ 12 ժ. 56 ր. գիշ., Հաջի-Կաբուլ 4 ժ. 40 ր. գիշ., Բագու 7 ժ. 53 ր. առ.։ **Խառն գնացքը** № 106 (Մարդատարի արագութեամբ ապրանքների համար)—5 ժ. 53 ր. գիշ., հասնում է Աղստաֆա 10 ժ. առ., Գանձակ 2 ժ. 31 ր. ցեր., Եւլախ 5 ժ. 45 ր. ցեր., Հաջի-Կաբուլ 12 ժ. 29 ր. գիշ., Բագու 6 ժ. 54 ր. առ.։

ԲԱԹՈՒՄ.—Մարդատար գնացքը № 11—10 ժ. 2 ր. գիշ., հասնում է Միխայլօվօ 1 ժ. 58 ր. գիշ., Բաթում 10 ժ. 21 ր. առ.։ **Պօստատար գնացքը** № 3—9 ժ. 50 ր. առ., հասնում է Միխայլօվօ 1 ժ. 55 ր. ցեր., Բաթում 11 ժ. 7 ր. գիշ.։ **Մարդատար գնացքը** № 5—4 ժամ 38 ր. ցերեկվայ հասնում է Միխայլօվօ 8 ժ. 44 ր. եր., Բաթում 5 ժ. 56 ր. գիշ.։ **Խառն գնացքը** № 107 (մարդատարի արագութեամբ ապրանքների համար)—4 ժ. 20 ր. գիշ., հասնում է Միխայլօվօ 10 ժ. 10 ր. առաւ., Բաթում 12 ժ. 26 ր. գիշ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆ.—Պօստատար գնացքը № 4/3—1 ժ. 11 ր. գիշ., հասնում է Ղարաքիլիսա 8 ժ. 30 ր. առ., Ալէքսանդրօպօլ 12 ժ. 7 ր. ցեր., Էջմիածին 5 ժ. 22 ր. ցեր., Ուլուխանլու 5 ժ. 49 ր. ցեր. (առանց Երևան մտնելու), Նախիջևան 10 ժ. 15 ր. եր., Ջուլֆա 11 ժ. 40 ր. գիշ.։ **Մարդ.-ապրանքատար գնացքը** № 8/79 (միայն II և III կարգի վագոններով)—1 ժ. 6 ր. ցեր., հասնում է Ղարաքիլիսա 8 ժ. 23 ր. եր., Ալէքսանդրօպօլ 12 ժ. գիշ., Էջմիածին 5 ժ. 29 ր. գիշ., Ուլուխանլու 6 ժ. 11 ր. առ., Երևան 6 ժ. 51 ր. առաւ.։ **Մարդատար-ապրանքատար գնացքը** № 6/5—8 ժ. 10 ր. եր., հասնում է Ղարաքիլիսա 3 ժ. 37 ր. գիշ., Ալէքսանդրօպօլ 7 ժ. 14 ր. առ., Կարս 10 ժ. 48 ր. առ.։

ԲՈՐԺՕՄ.—Մարդատար գնացքը № 95/10—3 ժ. 17 ր. ցեր., հասնում է Գօրի 5 ժ. 57 ր. ցեր., Բօրժօմ 9 ժ. 13 ր. եր.։

ԹԻՖԼԻՍ Է ՀԱՍՆՈՒՄ

ԲԱԳՈՒԻՑ.—Արագ գնացքը № 1—9 ժ. 10 ր. եր., **Պօստատար գնացքը** № 3—9 ժ. առ.։ **Մարդատար գնացքը** № 5—3 ժ. 46 ր. ցեր.։ **Խառն գնացքը** № 107—3 ժ. 8 ր. գիշ.։

ԲԱԹՈՒՄԻՑ.—Արագ գնացքը № 12—8 ժ. 50 ր. առ., **Պօստատար գնացքը** № 4—11 ժ. 32 ր. գիշ.։ **Մարդատար գնացքը** № 6—5 ժ. 15 ր. ցեր.։ **Խառն գնացքը** № 106—5 ժ. 15 ր. գիշ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆԻՑ.—Պօստատար գնացքը №40/3—8 ժ. առ.։ **Մարդ.-ապրանքատար գնացքը** № 6K./5—1 ժ. 28 ր. ցեր.։ **Մարդ.-ապրանքատար գնացքը** № 8Э/7—5 ժ. 28 ր. ցեր.։

ԲՈՐԺՕՄԻՑ.—Մարդատար գնացքը № 9/10Б—11 ժ. 22 ր. առ.։

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
«606»-ի ՆԵՐՄՈՒԾՈՒՄ ԲԺՇԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԵԱՄԲ՝ 11—12 ժ.
Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան վեներական (սիֆիլիս) հ.։
Բ. Գ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—1—2 ժ. ներքին և երեխայոց հիւ.։
Կ. Մ. ՉԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին ննեարգային։
Հ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան կանանց և երեխայոց հ.։
Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.։
Մ Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներական վիրաբուժութեան և միզասեռ. հ.։
Գ. Ց. ԳՈՒՐԳԷՆՕՎ—12—1 ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ ԱՄԲՐՈՒՄՕՎԱ-ՄԵԼԻՔԵԱՆ—12—1 ժ. մանկաբարձութիւն և կանանց հիւ.։
ԵՐԵԿՈՆԵՐԸ՝
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—6—7 ժ.։
ԿԻՆ ԲԺԻՇԿ Մ. Լ. ՌԵՆԻԳԵՐ-ԱՐԵՇԵՎԱ—6—7 ժ. մանկաբարձութիւն, կանանց և երեխայոց հիւ.։
Հ. Ա. ԹԱՌՈՒՄԵԱՆ—6—7 ժ. ներքին և երեխայոց հիւ. քննութիւն արեան, մէզի և այլն։
Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
1. 0—111

ԲԺՇԿԱՊԵՏ
Ա. Յ. ԲԱԹԱՆԵԱՆ
Վերակսեց ընդունելութիւնը ներքին և ջղային հիւանդութիւնների։
Առաւօտեան ժամը 10—12-ը և երեկոյեան ժամը 6—8-ը
Միքայէլեան փողոց, № 27.
(ա. օ.) 837. 25—19

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉ. ԸՆԿ.
Ն. Ա. ՌՈՒԲԱԿԻՆ
„Ստորերկրեայ կեանք“
Թարգմ. Մ. Պ.։ Թիֆլիս, 1912 թ., գինն է 50 կոպ.։ Բազմաթիւ նկարներով։ Այս գիրքը շատ մատչելի լեզուով ամփոփ տեղեկութիւններ է տալիս ստորերկրեայ ույժերի մասին և կատարելապէս գոհացնում վերջին ժամանակներս տեղի ունեցած երկրաշարժների առիթով հասարակութեան մէջ ծագած հետաքրքրութիւնը։ Դիմել Թիֆլիսի բոլոր գրախանութներին, Ընկ. ճիւղերին և գաւառական աշխատակից անդամներին։ Ընկ. հասցէն՝ Тифлисъ, Кавказское Армянское Издательское О-во. Бебутовская ул. № 25.
(օ.մ.) 898. 3—2

„Մշակի“ խմբագրատանը
վաճառվում են
հետեւեալ վիպական երկերը.
1) ՋՀՈՒԴ ՔՈՒՇԱՆ, վէպ Պարսկաստանի կեանքից. Շահրիարի . 1 ր. —
2) ԻՆՆՍՈՒՆ ԵՐԵՔԸ, մեծ վէպ Վ. Հիւգօյի, Թարգմ. Ա. Սափարեանի 1 ր. 50 կ.
3) ՈՒՐԱՆԻԱ, աստղագիտ. վէպ Կ. Ֆլամարիօնի, Թարգմ. Հ. Առաքելեանի . . . . . 1 ր. 50 կ.
4) ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂԸ, վէպ Հանրի Բօրդօյի, Թարգմ. Հ. Առաքելեանի — 60 կ.
5) ՏԱՍՆ ԵՒ ԵՐԿՈՒ ՊԱՏՄՈՒԱԾՔ, Շահրիարի . . . . . — 50 կ.
6) ՀԱՅՐԵՆԱՍԻՐԸ, Ե. Սպիրէի, Թարգմ. Իս. Յարութիւնեանի . — 50 կ.
7) ՔՍԱՆ ՎԷՊԻԿՆԵՐ, Գի դը Մօպասանի, Թարգմ. Հ. Առաքելեանի 1 ր. —
8) ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԱՊՈՒԿ, Բժշկեանց Ս.-ի . — 50 կ.
9) ՍԱՀԱՐՈՆԻ ՈԴԻՆ, վէպ Ց. Սօլօվեանի . . . . . . — 40 կ.
Նրանք, որոնք յիշեալ գրքերից մի մի օրինակ կը պահանջեն մեզանից փողը կանխիկ ուղարկելով, կը ստանան 30% զեղչ և ճանապարհածախսը մեզ վրայ։ Վերադիր վճարով պահանջողներին զեղչ կը լինի 25%
(3) 10—10

Բացված է առաջիկայ 1913 թ.
„ԱՂԲԻՒՐԻ“ 31-րդ տարեշրջանի և
„ՏԱՐԱԶԻ“ 24-րդ տարեշրջանի բաժանորդագրութիւնը։ 25 յաւելուածներով եւ պրէմիաներով, որոնցից 15-ը տրվում են Նոր-Տարվայ № № ի հետ, իսկ Թիֆլիսում հէնց բաժանորդագրվելիս։ „ԱՂԲԻՒՐԻ“ և „ՏԱՐԱԶԻ“ տարեկան բաժանորդագինը բոլոր 25 յաւելուածներով և պրէմիաներով 10 ր. (արտասահման 18 ր. կամ 50 ֆր.), նոյնը դպրոցական աշակերտների հասցէով 5 ր.
ԱՊԱՌԻԿ ԵՒ ՄԱՍ-ՄԱՍ ՎՃԱՐՈՂ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐ ՉԵՆ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ։
Հասցէն՝ Тифлисъ, Редакція „Агбюръ“. „Таразъ“. Tiflis. Dirèction „Agbur“-„Taraz“.
0—4

Դեկտեմբերի վերջին լոյս կը տեսնի
„Մոխակ Հայաստանի“
Ազգային լիակատար երգարանի 10-րդ տպագրութիւնը
Բաժանորդագինն է 1 րուբլի։
Հասցէն՝ Баку, Протоіерею Григорію Григоріанцъ. (ու.) 899. 2—2

1913 թ. յունվարի 1-ից հրատարակվելու է իբրջ անկուսակցական, պատկերազարդ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
„ԱՐՓԻ“
որ տալու է տարվայ ընթացքում 50 ՀԱՄԱՐ և 12 ԳԻՐՔ: «ԱՐՓԻՆ» ունենալու է գրականութեան բոլոր բաժինները, պատկերներ և նկարներ առօրեայ կեանքից, զաւեշտական բաժին ծաղրանկարներով, նորութիւններ ամբողջ աշխարհից։
Տպվելու է սեփական «ԷՍՊԵՐԱՆՏՕ» տպարանում, լաւ թղթի վրա եւ լաւ տեսակի մուրով:
«ԱՐՓԻԻ» յաւելուածները լինելու են գրքերով և 12 գրքի մէջ կը տրվի մանրամասն
«ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ» մինչև 1913 թ.։
«Հայոց պատմութիւնը կազմել է Հայկ Տէր-Աստուածատրեանցը համաձայն հայ և օտար աղբիւրների և գիրքը ունենալու է 800 էջ և 200 ից աւելի պատկերներ և քարտէզներ
ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ
Ռուսաստանի համար միմիայն 3 ր., 6 ամիսը՝ 1 ր. 75 կ.
Պարսկաստան տարեկան 6 րուբլի։
Թիւրքիա և այլ երկիրներ՝ 15 ֆրանկ։
Ամերիկա՝ 3 դոլար։
Առանց յաւելուածների բաժանորդագրութիւն չէ ընդունվում:
Բաժանորդ կարելի է գրվել միմիայն խմբագրատանը՝ Թիֆլիս, տպարան «ԷՍՊԵՐԱՆՏՕ» Ելիզաւետինսկայա փողոց, № 17. Тифлисъ, редакція журнала „АРПИ“ (Типографі „Эсперанто“). Tiflis, Redakcio de gazeto „ARPI“ (Presejo „Esperanto“).
(ա. օ.) 904. 5—1

ՑԻՆՈՒԹԵԱՆ ՆԻՒԹԵՂԷՆՆԵՐԻ ՊԱՀԵՍՏ
Ինժեներ Ի. Ս. Պօնդօյեվի
Թիֆլիս, Ելիզավետին. փ. № 164, անկիւն Բակինսկայա փ.։ Տելֆօն №10—93.
ՊԱՀԵՍՏՈՒՄ ԿԱՆ
ՑԵՄԵՆՏ ԵՐԿԱԹԷ ԳԵՐԱՆՆԵՐ
ԵՐԿԱԹ—անկիւն, եռանկիւն, բոլորակ, տանիքի թիթեղ եւ ցինկով պատած ԱՍ-ԲԱՍՏ [illegible] ԳՈՒԴՐՈՆ, կրակի դիմացող աղիւս և կաւ, Շիֆեր, [illegible] ԱՍՖԱԼՏ, ԳԻՄՆԱԶ [illegible] Թիֆլիսում [illegible] պատուէրները կատարվում են [illegible]
(ճում) 617. 50—45

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорисъ-Меликовская улица, домъ казенный